

ՀՅԴ Պատգմաբեր




ԴՐՕՇԱԿ



Հունիս N06 (1621)

2010





“Դրօշակ”

ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ ՀՅԴ

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

խմբագիր՝ Կ. Խանլարյան
Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի
Ձեռավորումը՝ Ա. Գրիգորյանի

Ոճը՝ Ս. Փարթամյանի

Գրանցման վկայական 897

Երևան, 375010, Միեր Մկրտչյան 12/1
Հեռ. 521 876
Էլ. փոստ. droshak@arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

“Droshak” monthly,
ARF dashnaksoutiun publication

Editor-in-Chief: Rouben Hovsepian

12| 1 Mher Mkrtchian, Yerevan, 375010
Tel. 521 876
e.mail: droshak@arf.am

Խմբագրական

Նախընտրական մարտահարուներ 2

Ընկերվար միջազգայնական

Սոցիալիստների ժողով Երևանում 4

Սոցիալ-սոցիալական

Համայնքների խոստրացման և միջհամայնքային միա-
վորումների ձևավորման անհրաժեշտությունը ՀՀ-ում 16

Տեսական

«Ազգ», «ազգություն» հասկացությունների միջնադար-
յան ըմբռնումները և հայ իրականությունը 23

Ազգային ժողով

Վսանգված է ազգային լեզվի և ազգային դպրոցի
հեռանկարը 30

Տեղեկանք

Թուրք-ադրբեջանական հակահայ լոբբինգը
Միացյալ Նահանգներում 32

Ռեդյուսաժ

«Արամ Մանուկյան» կենտրոնը բացեց իր դռները 38

Պահոց

Բաֆֆիի կնոջ և որդիների մասին 43

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ


Մարտիրոս Չարուխչեան 46

Նոր գրքեր

«Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության
տարիներին. ընթացքը և հետևանքները» 47

Պատկերասրահ

Գրիգորյան Արմինե 48



Նախընտրական մարտահրավերներ

ՀՅ Դաշնակցության Հայաստանի կազմակերպության 15-րդ Գերագոյն ժողովը տեղի ունեցավ յունիսի սկզբին: Ժողովը բազմաթիւ եւ բազմաբնոյթ հարցերի քննարկումից եւ համապատասխան բանաձեւեր ընդունելուց յետոյ ընտրեց նոր Գերագոյն Մարմին: Որպէս քաղաքական ընդդիմադիր լիարժէք ուժ՝ կուսակցության գլխաւոր խնդիրը առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններին յաղթանակելն ու երկրի ղեկավարման պատասխանատուութիւնը ստանձնելն է: Այսուհանդերձ, ՀՅ Դաշնակցութիւնը չի կարող նոյնիսկ նախընտրական շրջանում անտարբեր լինել ճակատագրական մարտահրավերներով յղի այսօրեայ իրադարձութիւնների նկատմամբ:

Ազգային-պետական քաղաքականութեան բնագաւառում հայ-թուրքական գործընթացը, որի էութեան նկատմամբ բազմաթիւ բացասական տեսակէտներ ի յայտ եկան հայ իրականութեան մէջ, առկախուեց ՀՀ նախագահի նախաձեռնութեամբ: Միաւրի սրբագրման ամենաճշգրիտ քայլը վերապահուած է հենց ՀՀ գործադիր իշխանութեանը՝ իր ստորագրութիւնը ետ կանչել: ՀՅԴ ԳՄ-ն պետք է շարունակի քաղաքական գիծը՝ վաւերացումը վերջնականապէս ձախողելու ուղիութեամբ:

Ազգային-պետական քաղաքականութեան միւս հարցը Արցախն է: Վերջին ամիսներին, բանակցային գործընթացին զուգընթաց, նկատելիօրէն մեծացաւ Ադրբ-


բեջանի դիւանագիտական ակտիւութիւնը: ՄԱԿ-ից յետոյ այժմ ադրբեջանական քարոզչա-լոբբիստական ասպարեզի է վերածուել նաեւ եւրոմիութենական համակարգը: Ապացուցուեց, որ ադրբեջանական այս «արտամինսկեան» մարտավարութիւնը, Մինսկի համանախագահող երկրներին դժգոհեցնելու փոխարէն, նրանց մղում է բանակցային խաղի հաւասարակշռութեան նժարը մի փոքր շեղել խաղի օրէնքները կոպիտ խախտողի օգտին: ՀՅԴ ԳՄ-ն պէտք է ուղղակի եւ անուղղակի բոլոր միջոցներով նպաստի բանակցային գործընթացում ՀՀ եւ ԼՂՀ-ի դիրքերի ամրագրմանը: Այս իմաստով մեծ է նաեւ ՀՅԴ Արցախի կազմակերպութեան դերը, որը ԼՂՀ խորհրդարանական վերջին ընտրութիւնների արդիւնքում շոշափելիօրէն ընդլայնել է իր օրէնսդրական գործունէութեան դաշտը:

Հայաստանի տնտեսական-ընկերային կեանքը լեցուն է անառողջ եւ սխալ երեւոյթներով, որոնք դարմանելու եւ սրբագրելու համար իրաւական ու գործնական լուծումներ են անհրաժեշտ: Այս բնագաւառը ենթադրում է երկու զուգահեռ ուղղութիւն ԳՄ-ի համար՝ մի կողմից օրէնսդրական դաշտում նախաձեռնել սոցիալական ապահովութեանն առնչուող օրինագծեր եւ կանխել վնասակար օրինագծերի վաւերացումը, միւս կողմից՝ հասարակական ոլորտում կազմակերպել անապահով տարբեր խաւերի սոցիալական շահերի պաշտպանութիւն: Պէտք է տեսարար հաշուի նստել այն պարզ ճշմարտութեան հետ,

ըստ որի հասարակութեան մէջ արդարութեան հաստատման յոյսը մարելու դէպքում, երկիրը զրկում է զարգացման հեռանկարից: Մեր հասարակութեանը պէտք է ներշնչել այդ յոյսը՝ գաղափարական սպառազինմամբ, իրաւական իրազեկմամբ եւ սոցիալական շարժումներով:


Ուրախանալու մեծ առիթ է Մայիսի 28-ից «Երկիր Մեղիայի» արբանեակային հեռարձակման մեկնարկը: Հայաստանը արդէն աշխարհի հայութեանը անմիջականօրէն հաղորդում է չորս հեռուստաալիքներով: Գերագոյն Մարմինը՝ որպէս Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ընտանիքի հայաստանեան կառոյցի ղեկավար մարմին, այս բնագաւառում ունի շատ որոշակի առաքելութիւն՝ ստանձնել կամրջողի դեր Հայաստանի եւ Սփիւռքի հանրային կարծիքների միջեւ, ամբողջացնելու մեր արբանեակային հեռարձակումների տեղեկատուական դաշտը, յատկապէս մեր ազգային հիմնահարցերի առնչութեամբ:

Երեւանում, Մայիսի 28-ի առիթով, բացուեց ազգային-պետական ղեկավար Արամ Մանուկեանի անուան երիտասարդական կենտրոնը: Խորհրդանշական այս քայլի հիմքում, ըստ էութեան, ընկած է երիտասարդութեան դերի կարեւորման դաշնակցական հնաւանդ մօտեցումը, որի պահպանման, այժմէականացման եւ զարգացման ուղղութեամբ ՀՅԴ ԳՄ-ն, իր ուսանողական, երիտասարդական եւ պատանեկան միութիւններով, ի վիճակի է նորանոր ձեռքբերումներ արձանագրել:



Սոցիալիստների ժողով Երևանում

Պեսք է մերձեցնել մարդկանց դիրքորոշումները



Հունիսի 11-ին առաջին անգամ Երևանում մեկնարկեց Ընկերվար միջազգայնականի (Սոցիալիստներն) ԱՊՀ-ի, Կովկասի և Սև ծովյան տարածաշրջանի հանձնախմբի ժողովի առաջին նիստը: Հայ Յեղափոխական Դաշնակցության հյուրընկալած ժողովին մասնակցում էին տասներկու երկրների սոցիալիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների 20-ից ավելի ներկայացուցիչներ:

Ժողովի օրակարգում էին՝ մասնակից երկրների ներկայացուցիչների զեկույցները իրենց երկրներում տիրող քաղաքական իրավիճակի շուրջ, տարածաշրջանում ժողովրդավարության և նրա

կառույցների զարգացման ապահովումն ու ամրապնդումը և ԱՊՀ-ի, Կովկասի ու Սև ծովյան տարածաշրջանի երկրներում սոցիալ-դեմոկրատական պլատֆորմի առաջընթացը:

Սոցիալիստների գլխավոր քարտուղար Լուիս Այալան իր ելույթում կարևորեց առաջին անգամ Հայաստանում ժողովի գումարման հանգամանքն ու ավելացրեց, որ Սոցիալիստական ինտերնացիոնալի՝ տարածաշրջանում միակ լիիրավ անդամ ՀՅԴ-ն միշտ ակտիվ է բոլոր նախաձեռնություններում:

«Այսօր մենք կանգնած ենք մի խաչմերուկում, որը պահանջում է առաջ գնալու համար ընտրու-

թյուն կատարել: Շատ բան պետք է փոխվի համաշխարհային մակարդակով միջազգային տրնտեսական համակարգում, և մենք այդ ամենի իրականացման մասն ենք կազմում: Շատ բաներ, հանուն որոնց պայքարում էինք, հաստատվեցին: Այսօր մարդիկ ընդունում են, որ այն ամենը, ինչ ասել և ասում ենք, շռայլություն չէ: Մենք պետք է պայքարենք և լավատես լինենք», - հավաստիացրեց Լուիս Ալյալան:

Անդրադառնալով ԱՊՀ երկրների ընդհանուր իրավիճակին՝ Սոցիոտերնի գլխավոր քարտուղարը նշեց, որ ժողովրդավարությունը, որը ընդհանուրի կողմից ընդունված, ընդհանուրի կարծիքի հիման վրա առաջ ընթանալու ճանապարհն է, պետք է խարսխվի և արմատավորվի ԱՊՀ-ում: Եվ հենց սոցիալ-դեմոկրատներն են, որ պետք է դրա առաջամարտիկները լինեն: Իսկ առաջ ընթանալու միակ ուղին, ըստ Լուիս Ալյալայի, խաղաղության պահպանումն ու ամրապնդումն է:

«Խաղաղությունը ամեն ինչ չէ, բայց առանց խաղաղության ոչինչ հնարավոր չէ: Սոցիոտերնը պետք է որպես պլատֆորմ ծառայի քաղաքական երկխոսության համար: Առանց երկխոսության որևէ հակամարտություն չի կարող լուծվել: Չի կարելի պարտադրել քաղաքական լուծում առանց երկխոսության, որն ընդունելի չէ երկու կողմերի համար էլ: Մերը սկսվում է Սոցիոտերնում, հարսանիքը կարող է այլ տեղ լինել:

Այսինքն՝ եթե մենք կարողանանք մերձեցնել մարդկանց դիրքորոշումները, ապա դա արդեն իսկ լավ է», - եզրափակեց Լ. Ալյալան:

Լեհաստանի ներկայացուցիչ Տադեուշ Իվինսկին ցանկություն հայտնեց, որ նման հանդիպումներ կազմակերպվեն ամեն տարի, քանի որ ԱՊՀ-ում, Կովկասյան և Սևծովյան տարածաշրջանում բազմաթիվ ուշագրավ գործընթացներ են տեղի ունենում:

«Հիմնական մարտահրավերը, որն ունենք որպես սոցիալ-դեմոկրատներ, այն է, որ մենք կարող ենք գտնել հավասարակշռություն շուկայական տնտեսության և պետության միջամտությունների միջև», - նշեց Լեհաստանի ներկայացուցիչը, ապա հույս հայտնեց, որ իրենք կկարողանան իրենց փոքր ներդրումն ունենալ նաև Արցախյան հարցի լուծման ճանապարհին:

Վրաստանի ընդդիմադիր Լեյբորիստական



Սոցիոտերնի գլխավոր քարտուղար Լուիս Ալյալա

կուսակցության ներկայացուցիչ Էլիզաբեթ Կիրտաձեն էլ իր ելույթում նշեց, որ իրենք ցանկանում են դառնալ Սոցիոտերնի անդամ, քանի որ այդ դեպքում Վրաստանում կամրապնդվեն և կհզորանան սոցիալ-դեմոկրատական արժեքները: Անդրադառնալով Վրաստանում տիրող ներկա վիճակին՝ նա ասաց. «Վրաստանում քաղաքական իրավիճակն այնքան էլ բարենպաստ չէ: Արտերկրում առկա այն կարծիքը, թե Վրաստանում ձևավորվել է ժողովրդավարություն, չի համապատասխանում իրականությանը: Մենք ունենք քաղաքական բանտարկյալներ, բռնություններ, չունենք ազատ մամուլ... Ժողովրդավարությունը նաև արդարություն է, խաղաղություն, փոխըմբռնում, և մենք պատրաստ ենք տարաբնույթ սոցիալիստական կուսակցությունների հետ զարգացնել այս արժեքները և աշխատել ձեզ հետ միասին»:

Մեր այն հարցին, թե նրա ներկայացրած կուսակցությունը աշխատանքներ տանո՞ւմ է, արդյոք, շրջաններում և, մասնավորապես, Ջավախքում, նա պատասխանեց, որ կուսակցության բջիջներ կան Վրաստանի ողջ տարածքում, բայց ազգային փոքրամասնությունները միշտ էլ հակված են դեպի իշխանությունները, մի բան, որ նկատվում է գրեթե բոլոր բազմազգ երկրներում: Համապետական ընտրություններում Վրաստանի իշխանությունները միայն Ջավախքից և հարևան Մառնեուլից մոտ 500 հազար քվե են շահում: Դա շատ լուրջ ընտրազանգված է, որի շրջանում մենք դեռ անելիք շատ ունենք:

Մենք միասին Եւս անելիք ունենք

**ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հրան Խարգարյանի
 ողջույնի խոսքը Ընկերվար միջազգայնականի ԱՊՀ-
 ի, Կովկասի և Սևծովյան հանձնախմբի
 ժողովի բացման նիստում**



Բարի գալուստ Երևան: Մենք ուրախ ենք բոլորիդ
 ողջունելու համայն հայության հայրենիք Հայաստանի
 մայրաքաղաքում:

Որդես գաղափարական նույն, մեծ ընթացիկ
 անդամներ՝ մենք միասին Եւս անելիք ունենք մեր
 սարձաբանում, և համոզված եմ, որ Երևանում մեր
 համախմբվելը ինքնին կնշխատի գործի հաջողու-
 րանը: Ընկերվար միջազգայնականի սարձաբան-
 նային այս հանձնախմբի ժողովը Երևանում գումար-
 տելու որոշումը ավելի քան հինգ տարի ավարտություն
 ունի, սակայն այդ որոշման իրականացումը հանդի-
 րում էր տարբեր խոչընդոտների: Այսօր Երևանյան այս
 ժողովի գումարումը նշանակում է, որ այդ խոչընդոտ-
 ները մեծ մասամբ հաղթահարվել են, իսկ դրանում
 մեծ է Ընկերվար միջազգայնականի գլխավոր ֆար-
 տուղար Լուիս Այալայի դերակատարությունը, ում և
 հայտնում ենք մեր երախտագիտությունը:

Ժողովի մեկնարկից մեկ-երկու ժամ առաջ դեռևս
 կարծում էինք, որ այս ժողովը կկարևորվի նրանով, որ
 կմասնակցեն մեր երկու հարևան երկրներից՝ Վրաս-
 տանից և Ադրբեջանից ժամանած կուսակցություննե-
 րի ներկայացուցիչներ: Դժբախտաբար, վերջին դա-
 հին, ցարդ անհայտ դատաւարներով, Ադրբեջանից
 դատավիճակը Երևան չի ժամանել (միայն երեկոյան
 դարձ դարձավ, որ օրվա երկուրդ կեսին Ադրբեջանի
 դատավիճակն այնուամենայնիվ ժամանել է Հայաս-
 տան, «Դրոշակ»): Ճիշտ է, մենք Ադրբեջանի հետ գրո-
 նվում ենք դեռևս չկարգավորված հակամարտության
 մեջ, սակայն դա չդիտարկ է դատաւար լինի, որ մենք գա-
 ղափարական նույն ընթացիկ անդամներս, իրար հետ
 չխոսենք: Ընդհակառակը՝ արդարության համար
 դաշտաբան կուսակցությունների միջև երկխոսությու-
 նը կարող է միայն նույնպես հակամարտության կար-
 գավորմանը: Այս ակնկալիքով էլ ողջունելու էինք
 Ադրբեջանի Սոցիալ-դեմոկրատական կուսակցու-

թյան փոխնախագահի մասնակցությունը այս ժողովի-
 վին: Բայց, անհասկանալի դատաւարներով, դրա
 հնարավորությունը չունենք:

Վրաստանի հետ սերտորեն է առնչվում մեր կուսակ-
 ցության դատաւարությունը. ի վերջո, 120 տարի առաջ մեր
 կուսակցությունը այնտեղ՝ Թիֆլիսում է հիմնադրվել,
 իսկ 1918 թ. մայիսի 28-ին մեր դեմակառուցության՝ Հա-
 յաստանի Հանրապետության հիմնադրման հռչա-
 կումն էլ կատարվել է այնտեղ: Սակայն միշտ չէ, որ
 մեր հարաբերությունները եղել են հետո ու հետո, ինչն
 իր հետքն է թողել մեր հարաբերությունների վրա. առ-
 կա են փոխադարձ անվստահության երևույթներ:
 Բայց հանուն մեր երկու ժողովուրդների և դեմո-
 կրատիկ շահերի՝ մենք այդ երևույթները դիտարկ է հաղ-
 փահարենք, և դա կարող ենք անել միայն երկխոսու-
 րանք: Այս հույսով եմ ողջունում Վրաստանի Լեյբո-
 ռիստական և Սոցիալ-դեմոկրատական զարգացման
 կուսակցությունների ներկայացուցիչների մասնակ-
 ցությունը ժողովին:

Անուշտ, մենք կցանկանայինք այստեղ տեսնել
 նաև Թուրքիայում արդարության համար դաշտաբան
 կուսակցությունների ներկայացուցիչների, ինչը, կար-
 ծում ենք, տեղի կունենա առաջիկայում:

Բոլորիդ ներկայությունը ողջունելով և մասնակ-
 ցությունը կարևորելով հանդերձ՝ թույլ տվեք հասուկ
 անդրադառնալ մի Եւս կուսակցությունների ներկա-
 րությանը:

«Արդար Ռուսաստան» կուսակցության հետ մենք
 ունենք միջկուսակցական համագործակցության
 դաշտաբանագիր, ինչը, համոզված եմ, իր նույնպես
 ինչ նաև միջդեմակառուցության հարաբերությունների զարգաց-
 մանը:

Ըվեդիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցու-
 րությունը վերջին ամիսներին հասուկ դերակատարու-
 րուն ունեցավ հայկական հարցերում: Նախ՝ մարտի

11-ին, երբ Ըվեդիայի խորհրդարանը ճանաչեց Հայոց ցեղասպանության փաստը, և մենք հաստատեցինք, որ առանց Ըվեդիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության նախաձեռնությամբ դիմումներ ներկայացնելու մասին որևէ չափափակում չկա: Երկրորդ՝ մարտի 25-26-ը Ըվեդիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչը մասնակցեց մեր կազմակերպած խորհրդաժողովին՝ «Սոցիալիստական մոստեցումներ Հայաստանի մարտահրավերներին. գլոբալ հեռանկարներ, սեղական իրողություններ» թեմայով: Պարզ է, որ Ըվեդիայի սոցիալ-դեմոկրատական փորձից մենք և՛ որդես կուսակցություն, և՛ որդես դեմոկրատական շարժում ունենք նույնպես, բայց այդ ուղղությամբ ավելի ակտիվ կաշխատենք Ըվեդիայում առաջիկա ընտրություններից հետո, որտեղ մեր գործընկերներին մաղթում ենք հաղթանակ:

Ուզում եմ հասուկ ջերմությամբ ողջունել Պաղեստինի «Ֆաթահ» կուսակցության ներկայացուցչի մասնակցությունը: Վերջին ամիսներին և հասկալիքներ վերջին ժամանակներին որոշ քննարկներ փորձում են սեղ խրել հայ և Պաղեստինի ժողովուրդների միջև, փորձում են հակասություն սերմանել նույնաման ճակատագիր ունեցող մեր երկու ժողովուրդների միջև: 17 մարտի Հայաստանը քաղաքական ենթակողները երբ խոսում են այլոց կողմից քաղաքական դեմ, երբ սղառնում են երկրից արտաքսել անդաճող մարդկանց... չի կարելի անստեղծել այս քաղաքականության անազնիվ, երեսուցիս և Երեսուցի կեցվածքը: Կան նաև այլ ուժեր, որոնք ելնելով Պաղեստինի ֆաղաֆական իրավիճակից, փորձում են ֆաղաֆական առևտրի առարկա դարձնել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Բարեբաղսաբար, երկու կողմում էլ կան զգոնության և խոհեմության կոչ անողներ, և մենք այդ ուժերի հետ համագործակցաբար կհաղթահարենք նաև ներկա դժվարությունները: Այս սեսանկյունից խիստ կարևոր են գնահատում Պաղեստինի ներկայացուցչի մասնակցությունը ժողովին:

Հունաստանից, Գերմանիայից և Եվրոպական սոցիալիստների կուսակցությունից ներկայացուցիչների մասնակցությունը կարևոր են համարում որդես այդ կուսակցությունների հետ մեր համագործակցության խորացման անհրաժեշտ հնարավորություններ:

Օրակարգի համադասասխան բաժնում ավելի մանրամասն կանդաղառնանք Հայաստանի սոցիալ-սեստական և ֆաղաֆական խնդիրներին և այդ խնդիրներին մեր՝ սոցիալիստական լուծումներ առաջարկելու ճիղին: Այստեղ ուզում եմ շեշտել մեկ հանգամանք. Հայ Յեղափոխական Դաճնակցությունը սոցիալիստական կուսակցություն է իր հիմնադրության

առաջին օրվանից, երբ նոդասակն էր Օսմանյան կայսրության մեջ արևմտահայության ազատագրումը: Այսինքն՝ Դաճնակցության համար հիմնականը եղել է կեղեման դեմ և արդարության համար ողայբարը: Իսկ մեր ոդասնությունը վկայում է այն մասին, որ հաճախ կեղեմողը եղել է օսար իճխանություն, որն իր նոդասակների իրագործման համար նույնիսկ ցեղասղանություն է գործել: Այս է ոդասճառը, որ արդարության համար մեր ողայբարը ունեցել է և ունի նաև ազգային նկարագիր: Մակայն Դաճնակցության համար «մերժելի է ազգային բացառիկության ամեն գաղափար և ազգայնամոլության ամեն երևույթ՝ իբրև մարդկային ընկերության բնականոն զարգացումն արգելակող դրսևորումներ» (ՀՅԴ Ծրագիր, 1998):

Այսօր մեր սեփական անկախ ոդեսությունում մենք Եարունակում ենք մեր ողայբարը կեղեման դեմ և արդարության համար, այլ խոսքով՝ սոցիալիստական սկզբունքների վրա: Հայ Յեղափոխական Դաճնակցությունը հավասում է, որ ընկերվարության իղեալը անիրականանալի է առանց ժողովրդավարության, իսկ ժողովրդավարությունը թերի է և սահմանափակ՝ առանց ընկերվարության (ՀՅԴ Ծրագիր, 1998):

Մեր սարածաճառում, որտեղ սոցիալիզմը ունի հին արմատներ, բայց սասնամյակներ նաև՝ ձևախեղված փորձ, այսօր մեծ են հնարավորությունները իսկական սոցիալիզմի սկզբունքների հիման վրա աշխատելու: Նման հնարավորություն և անհրաժեշտություն կա թե՛ յուրաֆանչուր ոդեսության ներսում և թե՛ միջոդեսական հարաբերություններում: Այստեղ մեծ է համագործակցության կարիքը թե՛ սարածաճառի և թե՛ սարածաճառից դուրս գործող կուսակցությունների միջև, փորձի փոխանակման և փոխադարձ վրսահոության վերականգնման նոդասակներով: Մենք այս նոդասակով հիմնադրել ենք «Հայր Մարուխյան» հիմնադրամը, որի ծրագրերի հաջողության համար աղայվիներու ենք բոլորիդ համագործակցությանը:

Պարզ է, որ Ընկերվար միջազգայնականը Միավորված ազգերի կազմակերոդություն կամ միջազգային անվսանգության այլ կառույց չէ: Ընկերվար միջազգայնականը ունի յուրահասուկ դերակասարություն՝ համախամբելու, համագործակցության հնարավորություններ սեղծելու գաղափարական նույն ընսանիքին ողականող, ֆաղաֆական երբեմն հակաղիր կեցվածքներով ֆաղաֆական ուժերի, կուսակցությունների միջև: Այս իմաստով էլ այս ժողովին մաղթում ենք արդյունավետ աշխատանք:

Բարով եք եկել բոլորդ:

Սոցիալիստական սոցիալիզմի ՀՅԴ-ից մեծ եմ

*Հարցազրույց Ընկերվար միջազգայնականի ԱՊՀ-ի,
Կովկասի և Սևծովյան տարածաշրջանի հանձնախմբի համանախագահ,
ՀՅԴ Բյուրոյի անդամ ընկ. Մարիո Նալբանդյանի հետ:*

- Այս հավաքի ընթացքում շատերը, իսկ Սոցիալիստական գլխավոր ֆարսուղար Լուիս Ալալան հասկապես, կարևորեցին ԱՊՀ-ի, Կովկասի և Սևծովյան տարածաշրջանի հանձնախմբի հերթական հավաքը Երևանում անցկացնելու հանգամանքը: Ինչո՞ւ:

- Այս տարածաշրջանում Սոցիալիստներին իր ներկայությունն ապահովելու մի ճանապարհունի: Դա կուսակցությունների միջոցով ներկայանալն է: Հատկապես Հարավային Կովկասում շատ է կարևորվում ՀՅԴ-ի ներկայությունը, քանի որ այն այդ կազմակերպության լիիրավ անդամ է: Եթե հաշվի առնենք, որ Վրաստանն ընդհանրապես մինչ այս ներկայացված չէր Սոցիալիստներում, իսկ Ադրբեյջանի Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը ոչ միշտ է կարողանում գործուն մասնակցություն բերել Սոցիալիստների աշխատանքներին, ապա պարզ կդառնա, որ Երևանում միանգամից 15 կուսակցությունների հավաքը, որ տեղի ունեցավ տարածաշրջանային կոմիտեի այս ժողովում, էական առաջընթաց պետք է համարել սոցիալ-դեմոկրատիայի գաղափարների տարածման գործում:

- Հավանաբար, Հայաստանը նորովի դասկերտված հավաքի մասնակիցներից շատերին և հասկապես նրանց, ովքեր առաջին անգամ էին լինում Երևանում: Ի՞նչ տեսանք, ըստ Ձեզ, նրանք Հայաստանում:

- Եռուն աշխատանքին զուգահեռ, երկու օրվա ընթացքում, իհարկե, շատ բան տեսնել չէին էլ կարող: Բայց ամենակարևորը նրանք նկատեցին: Դա այն դրական մթնոլորտն է, որ այսօր կա Հայաստանում սոցիալ-դեմոկրատիայի առաջընթացի առումով: Նրանք տեսան, որ ի դեմս Դաշնակցության Հայաստանում կա գաղափարակից հզոր կուսակցություն՝ իր կենտրոններով և տարբեր կառույցներով: Տեսան նաև մեր երիտասարդների ակտիվ մասնակցությունը կուսակցական աշխատանքներին: Այդ ամենը նշանակում է, որ ՀՅԴ-ն ապրող և աշխատող կուսակցություն է թե երկրից ներս և թե միջազգային ասպարեզներում: Պետք է նկատեն, որ Սոցիալիստների ղեկավարների աչքից չվրիպեց նաև, որ այս հավաքը, ինչպես այս կառույցի մնացած միջոցառումները, անցավ բաց և թափանցիկ, բազմաթիվ լրատվամիջոցների ներ-



Մարիո Նալբանդյան

կայությամբ: Իսկ դա Սոցիոնտերնի կազմակերպությունում շատ բարձր է գնահատվում:

- ՀՅԴ-ն նաև այլ առաքելություն ունի՝ լինելով հետխորհրդային սարածֆից միակ լիիրավ անդամը Սոցիոնտերնում: Այդ հանգամանքը ֆանիցս նեցեց Լուիս Այալան: Հասկառես ի՞նչը նա նկատի ունի:

- ՀՅԴ-ն Սոցիոնտերնի լիիրավ անդամ է դարձել երկար տարիների աշխատանքի արդյունքում: Այսօր Սոցիոնտերնում ՀՅԴ ներկայացուցիչները նույնիսկ ղեկավար և պատասխանատու հանձնառություններ ունեն: Այս ամենն արդեն բավական է, որ այս տարածաշրջանը կարողանա ՀՅԴ միջոցով մշտական ներկայություն ունենալ Ընկերվար միջազգայնականում: ԽՍՀՄ նախկին հանրապետությունները Սոցիոնտերնի աշխատանքներից միշտ էլ բացակա են եղել: Ուստի այս առումով մենք նախ և առաջ ապահովում ենք մշտական կապ: Մենք նաև հակված ենք Սոցիոնտերնի համար կարևորել այս տարածաշրջ-

ջանն այն առումով, որ երկար ճանապարհի խնդիրներին վնաս չհասցվի մասնավոր, զուտ այսրոպեական լուծումներով: Մեր երևանյան հավաքն ասվածի լավագույն ապացույցն է: Եթե նկատեցիք, բացակայում էին միջինասիական երկրների ներկայացուցիչները: Այդ երկրներում, ճիշտ է, սոցիալ-դեմոկրատական գաղափարները սկսել են արդեն տարածում գտնել, բայց առանց համապատասխան կուսակցությունների հետ աշխատանք տանելու դրանք կարող են սխալ հունավորումներ ստանալ: Հետևաբար մենք նաև այս ուղղությամբ անելիքներ ունենք:

- Շնորհակալություն:

Հայաստանյան զարգացումներն, այնուամենայնիվ, սարքեր են

Արմեն Ռուստամյան



Ա. Ռուստամյան

Մենք երեկ և այսօր լսեցինք մեր սարածաօջանի գաղափարակից կուսակցությունների ներկայացուցիչների ելույթները և կրկին համոզվեցինք, որ հեխտրհրդային սա-

րածումն սոցիալ-դեմոկրատիայի առաջընթացը, հաջողությունները, նաև դժվարությունները, սարքեր երկրներում խիստ ընդգծված ընդհանրություններ ունեն: Բայց, եթե խոսելու ենք Հայաստանում սոցիալ-դեմոկրատիայի խնդիրների, այդ գաղափարախոսության զարգացման և առաջնորդման մասին, մենք ուզենք-չուզենք դիտարկել և անդրադառնանք նաև այն գործընթացներին, որոնցով մեր երկիրն, այնուամենայնիվ, առանձնանում է մյուսներից և որոնցով մեծադեպ տայմանավորված է սոցիալ-ֆառափական իրադրությունը մեր երկրում: Մեր գնահատմամբ՝ Հայաստանում սոցիալական իրավիճակը շատ բարդ է և խիստ լարված: Ի դեպ՝ անկախություն նվաճելուց ի վեր այն երբեք էլ աչքի չի ընկել սոցիալական արդարության ռեալիզմից, ինչի դարձն էր բացարձակություններից մեկն էլ այն է, որ սոցիալ-դեմոկրատիական որևէ ուժ մինչ այս իշխանության չի եկել Հայաստանում: Ինչ վերաբերում է ՀՅԴ-ին, ապա մենք եղել ենք և ընդդիմություն, և իշխանության մաս: Մակայն, չնայած գործադրված ջանքերին, մենք չենք կարողացել Հայաստանում հասնել այնպիսի հասարակության կայացմանը, որի հիմքում դրված կլինեին սոցիալական արդարության մեր դասկերացրած արժեհամակարգը: Մասնավորապես, համաժխտարհային ճնշման ճգնաժա-

մի հաղթահարման ուղղությամբ մեր կուսակցության առաջարկած ֆայլերի փաթեթը չընդունվեց ՀՀ կառավարության կողմից, ինչի հետևանքով մենք այդ ճգնաժամից դուրս եկանք մեծագույն վնասներով՝ մեզնից հետք թողնելով թերևս միայն Ուկրաինային: Այս ընթացքում իշխանությունների ֆայլերը նոյաստել են միայն միջին խավի նվազմանը և գրեթե ոչնչացմանը, ինչը խորացրել է հասարակության բևեռացումը և այն հասցրել վսանգավոր ասիճանի: Այսօր սա է մեր սագնադահարույց խնդիրներից մեկը:

ՀՅԴ-ի՝ որդես Հայաստանում սոցիալ-դեմոկրատիայի գաղափարների կրող և իրականացնող հիմնական ուժի, գործունեության առանցքային ուղղություններից են երկրում ադֆասության շեմի իրական չափորոշիչների ճրճման, մարդու կենսատախտիվման նվազագույն զամբյուղի ադախտիվման, դրան համադասասխան նաև կենսաթոշակների բարձրացման հարցերը: Մակայն այդ ամենին զուգընթաց վերջին տարիներին հասկադես մենք ստիդված ենք եղել ուժադրության կենտրոնում դախել հայթորֆական հարաբերոթյունների կարգավորման և հայ-ադրբեջանական հակամարտության շուրջ ծավալվող գործընթացները:

ՀՅԴ-ն երբեք էլ դեմ չի եղել հայթորֆական հարաբերոթյունների կարգավորմանն ու սահմանների բացմանը, ինչդես դա փորձել են ներկայացնել ՀՀ իշխանություններն ու իշխանական լրասվամիջոցները: Դաժնակցության մոտեցումը հսակ է՝ հարևանների միջև չեն կարող չկարգավորված հարաբերոթյուններ լինել, 21-րդ դարում չեն կարող փակ սահմաններ լինել: Եվ այս տեսանկյունից էլ հաստատել ենք, որ հարաբերոթյունների նորմալացումը դես է սկսվի առանց նախադայմանների դիվանագիտական հարաբերոթյունների հաստատմամբ, որից հետո էլ ասիճանաբար կլուծվեն մնացած հարցերը: Մակայն, սանալով այսդիսի արձանագրոթյուններ, ՀՅԴ-ն, որ սիրադեսում է հայթորֆական հարաբերոթյունների ողջ դասմական ընթացքին, չէր կարող չբարձրաձայնել դրանցում առկա վսանգների և նախադայմանների մասին: Այդ արձանագրոթյուններով մեզ

փորձում են դարտադրել հայթորֆական ներկասահմանը, որը երբեք չի վավերացվել միջազգային ընդունված ձևերով, Թորֆիան մեզնից դախանցում է դադարեցնել Հայոց ցեդասդանության փաստի ճանաչման գործընթացը և, վերջադես, ձգտում է հայթորֆական հարաբերոթյունների կարգավորումը կադել հայ-ադրբեջանական խնդիրների հետ և ճնշումներ բանեցնել Դարաբադի հարցում՝ մեզնից զիջումներ կորզելու հսակ մտադրությամբ: Բոլորս գիտենք, և Ադրբեջանից մեր գործընկերն էլ կարող է փաստել, որ Թորֆիան հսակ նախադայման ունի այս հարցում՝ ֆանի դեռ չի լուծվել դարաբադյան խնդիրը, հայթորֆական սահմանը չի բացվի: Իսկ ո՞ւմ համար դարգ չէ, որ Դարաբադի հարցի լուծումով կբացվեն բոլոր սահմանները, այդ թվում նաև հայ-ադրբեջանականը: Հետևաբար ի՞նչ միտ ունեին այս արձանագրոթյունները, որոնք ի վերջո ոչինչ չսվեցին:

Մեզ համար հարցերի հարցը Դարաբադի կարգավիճակն է: Մնացած հարցերը ծագում են ԼԴ-ի կարգավիճակից: Այս իրավիճակի ամենամեծ մեդավորը թերևս Ադրբեջանն է, որ դեռ հակամարտության սկզբից, 1988-ից, երբ դեռ Խորհրդային Միությունը կար, որդեգրեց հարցի կարգավորման ռազմական ուղին: Մինչդեռ բոլորին է հայտնի և իմ ադրբեջանցի գործընկերն էլ չի կարող ժխտել, որ Լեռնային Դարաբադը երբեք անկախ Ադրբեջանի կազմում չի եղել: Զի եղել ոչ մինչև 1920 թվականը, երբ Ադրբեջանը խորհրդայնացվեց և կորցրեց իր անկախությունը, և Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ Ադրբեջանը վերսացավ իր անկախությունը: Լեռնային Դարաբադի տարածքն Ադրբեջանի կազմ է ընդգրկվել 1921 թվականին, Սալիհի որոշումով, և մնացել նրա կազմում մինչև ԽՍՀՄ փլուզումը: Այնդես որ Դարաբադը թողնել Ադրբեջանի կազմում՝ նույնն է, թե փորձ անել վերականգնել ԽՍՀՄ-ը, շարունակություն հադորդել խորհրդային օրենքներին: Այս տրամաբանությամբ՝ երևի ադորինի՞ են անկախացել ԽՍՀՄ մյուս հանրադեսությունները, որոնց անկախությունը վադուց ճանաչվել է, երևի դես չէ՞ր ճանաչել Արևելյան Եվրոդայի և

Հարավսլավիայի հանրադատությունների անկախությունը: Ինչո՞ւ դեռ է ուրեմն Ղարաբաղի հարցը այլ ձևով լուծվի:

Մեր ադրբեջանցի գործընկերն այստեղ նույն, որ Ղարաբաղի հայերը ուզում են ինքնորոշվել ոչ իրենց դատարանի սահմաններում: Ավելի մեծ մոլորություն, որի մեջ փորձ է արվում ներառել միջազգային հանրությանը, չի կարող լինել: Ամբողջ Ղարաբաղի սահմանը, որ ծածկված է հայկական դատարանի սահմանափակումներով, միանգամայն հակառակ բան է ասում, և հայերը ինքնավարություն են դադարեցնում ոչ թե Բաքուում կամ Ֆրանսիայում, ինչպես իրենից հեռու են ունենում, այլ իրենց հայրենիքում: Այլ խոսքով, լավ ավելի դարձ, կարելի է ասել, որ ԽՍՀՄ օրինակով փլուզվել է նաև Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրադատությունը և նրա սահմանի վրա հայ և ադրբեջանցի ժողովուրդները հռչակել են երկու սարքեր դատարաններ՝ Ադրբեջանի Հանրադատություն և Լեռնային Ղարաբաղի Հանրադատություն՝ յուրաքանչյուրն իր հայրենիքի սահմանի վրա: Սա է փաստը:

Մեզ հաճախ են կատարում՝ եթե դուք վստահ եք, որ դա այդպես է, ապա ինչո՞ւ Հայաստանը չի ճանաչում ԼՂՀ անկախությունը: Հավասարապես են, սիրելի գործընկերներ, որ ձեզնից շատերին էլ հետաքրքրում է այս հարցը: Պես է իմանալ, ուրեմն, որ Հայաստանը ոչ թե դեռ է Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքին կամ չի դաժանում նրա այդ իրավունքը, այլ դարձապես կողմ է, որ այդ ինքնորոշումը ճանաչվի առաջին հերթին միջազգայնորեն: Հայաստանը չի ցանկանում ճանաչման գործընթացը սանել այլ դատարանների ճանադատումով, որով միակողմանի ճանաչեցին մի շարք երկրների անկախությունը: Սա կարող է համարել նաև Հայաստանի կողմից մեծագույն զիջում Ադրբեջանին՝ հարցը բանակցությունների սեղանի շուրջ լուծելու նպատակով: Հայաստանի դիրքորոշումն այս հարցերում սկզբունքային է, և, եթե նկատել եք, Հայաստանը չի ճանաչել ոչ Կոստովոյի, ոչ էլ Աբխազիայի ու Հարավային Օսիայի անկախությունը: Մեր դիրքորոշումը հետևյալն է՝ եթե

մենք սկսել ենք ԼՂՀ միջազգային ճանաչման գործընթաց, ապա այն դեռ է սանել միայն ու միայն միջազգային ճանաչման ընդունված ճանադատումներով, որպեսզի այդ անկախությունը բոլորը միասին ճանաչեն և ոչ թե մեկ կամ մի քանի երկիր:

Հասկալիս Ադրբեջանից հաճախ կարելի է լսել, թե միևնույն ազգը կարող է ինքնորոշվել մեկ անգամ: Սա դարձապես անհեթեթություն է: Առաջին հերթին դա երևում է Թուրքիայի և Ադրբեջանի օրինակով, որոնց ղեկավարները մեկ անգամ չէ, որ բարձրաձայնել են, թե իրենց նույն ազգն են՝ երկու սարքեր դատարաններում: Նույն Թուրքիան կարող է Կիպրոսի Հյուսիսը ճանաչել որպես թուրքական երրորդ դատարան, իսկ Ղարաբաղը չի՞ կարող ճանաչվել: Վերցնենք ողջ արաբական աշխարհը: Կարող են, ուրեմն, նույն արաբները բազմաթիվ ճանաչված դատարաններ ունենալ, իսկ հայերը՝ ո՞չ: Մեր կարծիքով՝ սրանք զուտ դատարանություններ են Ադրբեջանի համար, որպեսզի խուսափի խաղաղ բանակցությունների սեղանի շուրջ երկխոսությունից: Այդ սեղանի շուրջ, հասկանալի է, չեն կարող չլինել խոսակցություններ փոխզիջումների մասին: Ես ուզում եմ հասկանալ, թե ո՞րն է լինելու Ադրբեջանի փոխզիջումը՝ ի՞նչ ինչի՞ դիմաց: Նա Հայաստանից և Ղարաբաղից դադարեցնում է հետևյալ ազատագրված սահմանները: Դրանից հետո, ասացե՛ք, խնդրե՛մ, մենք ինչի՞ շուրջ կարող ենք այլևս խոսել: Ըստ Ադրբեջանի՝ մենք դեռ մի բան էլ չենք հասկանալ դեռ մի բան էլ չենք հասկանալ, որ իրենց նոր դատարանը չեն սկսում: Բայց մի՞թե դատարանի ստանդարտները հարցի լուծում է: Մի՞թե Ադրբեջանը մոռացել է, որ արցախյան դատարանի հետևյալ սկզբից ինքն զենքի ու մարդուժի հսկայական առավելություն է ունեցել Ղարաբաղի ինքնադատարանական ուժերի հանդեպ: Ինչի դա հանգեցրեց՝ բոլորին է հայտնի:

«Մենք հոյարս ենք Հայաստանում ժողովրդավարության ամրադնդ- մանն ուղղված ՀՅԴ ջանքերով և բերած ավանդով»

Լուիս Այալա

Սոցիալիստների գլխավոր քարտուղար Լուիս Այալան լրագրողների հետ հանդիպման ժամանակ ներկաներին վստահեցրեց, որ երկու օրերի ընթացքում, թափանցիկության մթնոլորտում, իրենց հաջողվել է հասնել նրան, ինչի համար հավաքվել էին Երևանում: Խոսելով Սոցիալիստական ինտերնացիոնալի՝ տարածաշրջանում միակ լիիրավ անդամ Հայ Յեղափոխական Դաշնակցության մասին, Լ. Այալան գոհունակությամբ նշեց, որ իրենք հպարտ են Հայաստանում ժողովրդավարության ամրապնդմանն ուղղված ՀՅԴ ջանքերով և բերած ավանդով:

«ՀՅԴ-ն իր նպատակն է բերում տարածաշրջանում առկա կոնֆլիկտների խաղաղ և արդար լուծմանը: Կուսակցությունը հրապարակայնության, թափանցիկության ոճով և առանց նախապայմանների է փորձում լուծել պատմական հարցերի շուրջ ստեղծված խնդիրները: Եվ մենք պետք է խրախուսենք մեր հայաստանյան կուսակցության ջանքերը: Սոցիալ-դեմոկրատիան այս տարածաշրջանի զարգացումների համար կենսունակ, կուռ քաղաքական ներկայություն է», - հավելեց Լ. Այալան:

Սոցիալիստների գլխավոր քարտուղարը իբրև տարածաշրջանային կոնֆլիկտների լուծման հիմնական պայման համարում է խնդիրը երկխոսության, նույն սեղանի շուրջ բանակցության միջոցով քննարկելը: Ըստ այդմ էլ, Լ. Այալան հատկապես կարևորեց ադրբեջանցի ներկայացուցչի մասնակցությունը: Գլխավոր քարտուղարը համոզված է, որ

Հայաստանում կա ժողովրդավարություն, և դրան պետք է հասնեն նաև Ադրբեջանում: Նա հայտնեց, որ Սոցիալիստները մասնակցելու է առաջիկա մեկ-երկու տարիների ընթացքում տարածաշրջանում սպասվող բոլոր ընտրություններին՝ պայքարելով ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների համար: Բացառություն չի լինելու նաև Ադրբեջանը:

«Նոյեմբերին Ադրբեջանում ընտրություններ են, և մենք մինչ ընտրությունները՝ դեռ հոկտեմբերին, այցելելու ենք Ադրբեջան ու պահանջելու ենք արդար ընտրություններ: Մենք հետևելու ենք ընտրությունների ողջ ընթացքին: Մենք կարողացանք երևանյան ժողովին ապահովել Ադրբեջանի ներկայությունը, և սա լինելու է երկու երկրների միջև բանակցությունների սկիզբը: Իսկ առաջիկայում էլ նախատեսում ենք անցկացնել կլոր սեղան Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի միջև», - ավելացրեց Լ. Այալան:



Ճանարտությունը մեր երկխոսության մեջ է

Հարցազրույց Ադրբեջանի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության փոխնախագահ, Ադրբեջանի ժողովուրդների վեհաժողովի նախագահի իրավապաշտպան Սալադին Ալլահվերդիևի հետ:

- Պարոն Ալլահվերդիև, Ձեր ուշացումը զանազան մեկնաբանություններ ունեցավ ժողովի մասնակիցների շրջանում և հայկական մամուլում: Ո՞րն էր ուշացման բուն պատճառը:

- Ուշացավ Թբիլիսիից Երևան թռչող ինքնաթիռը: Վրաստանի մայրաքաղաքից ես Հայաստան եմ եկել ավտոմեքենայով: Սա է ամբողջը:

- Դուք ելույթում նշեցիք, որ Ադրբեջանում շարերը առանձնապես ոգևորված չէին ձեր այս այցելությանը: Ո՞ւմ նկատի ունեիք, նաև որոշ պետական շրջանակների՞:

- Ոչ, մեր պետությունը որևէ խնդիր չի տեսնում նման շփումներում: Իմ այցելությունը Երևան ավելի շատ առանձին կուսակցությունների ու քաղաքական ուժերի սրտով չէր: Բայց մեր կուսակցությունը կողմնակից է գաղափարական դաշտում ընթացող այսպիսի հավաքների կազմա-

կերպմանը և հուսով եմք Ընկերվար միջազգայնականի այս հանձնաժողովի հերթական հավաքներից մեկը հյուրընկալել Բաքվում:

- Հենց նոր միասին լսեցինք Հայ Յեղափոխական Դաշնակցության Հայաստանի կառույցի ներկայացուցչի ելույթը, որում նա, ի մասնավորի, անդրադարձավ նաև փարսժաշրջանային խնդիրներին՝ կանգ առնելով դարաքաղյան հակամարտության վրա: Ինչպիսի՞ն է ձեր փաստաբանությունն այդ ելույթից:

- Պետք է ասեմ, որ շատ ազրեսիվ ելույթ էր: Նա բերեց փաստեր, որոնք վիճելի են: Մասնավորապես այն, որ Ղարաբաղը երբեք չի եղել Ադրբեջանի կազմում:

- Անկախ Ադրբեջանի կազմում. մի՞թե այդպես չէ:

- Ո՛չ, ո՛չ, դա այդպես չէ: Կան պատմական բազմաթիվ փաստաթղթեր, որոնցով փաստվում է հակառակը:



Սալադին Ալահվերդիև

- Պարոն Ռուսրամյանը մանրամասնեց, որ անկախություն նվաճած Ադրբեջանի կազմում ո՛չ նախախորհրդային, ո՛չ էլ հետխորհրդային շրջանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն չի եղել, որ Ղարաբաղը Սյրայինն է 1921 թ. նվիրել Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը:

- Բայց կան Ռուսական կայսրության ժամանակների վավերագրեր ու փաստաթղթեր, որոնք այլ բան են ասում այդ տարածքի՝ Ադրբեջանին պատկանելու մասին: Չի կարելի դրանք անտեսել:

- Նույնիսկ այն դեպքում, երբ այդ փաստաթղթերում չկա Ադրբեջանի հասկացությունը:

- Բայց կան նաև շատ երկրներ, որ նախկինում այլ կերպ են կոչվել, իսկ այժմ միանգամայն այլ անվանումներ ունեն:

- Դուք ընդունո՞ւմ եք, որ Ադրբեջանը պարտերազմ սկսեց Ղարաբաղի ժողովրդի

դեմ: Հիշեք, խնդրեմ, չեք գործերի առաջխաղացումը դեպի Ղարաբաղի խորքը և ապա նահանջն ու վերջնական ջախջախումը Ադդամից արևմուտք: Այսքանից հետո ո՞ւմ, անտեղյակներից բացի, կարող եք համոզել, որ ազրեսորը հայկական կողմն է:

- Մենք ոչ ոքի համոզելու խնդիր չունենք: Բոլորին էլ հայտնի է, որ ձեր գինուժն է գտնվում օտար պետության տարածքում և ոչ թե մերը:

- Դուք նկատո՞ւմ եք, որ մենք հակված ենք հավատալու միանգամայն փարբեր ճշմարտությունների: Մինչդեռ ճշմարտությունը մեկն է, որ երկուստեք այն ընդունելն անխուսափելի է:

- Այո, ես ձեզ հետ համաձայն եմ:

- Ո՞րն է, ուրեմն, Ադրբեջանի փեսականն այս հարցում: Դուք ինչպե՞ս եք պարկերացնում վերջնական լուծումը:

- Ադրբեջանը երբեք չի հաշտվի Լեռնային Ղարաբաղն իրենից անջատելու մտքի հետ: Փոխարենը մենք կարող ենք Ղարաբաղին տալ ամենալայն ինքնավարություն, ցամաքային կապ Հայաստանի հետ, ինքնակառավարման մարմիններ՝ ամենալայն իրավունքներով:

- Չեք կարծիքով՝ դա ավելի՞ն է, քան Ղարաբաղն ունի այսօր:

- Այն, ինչ ունի Ղարաբաղն այսօր, մասնավորապես՝ առանձին բանակ միևնույն պետության մեջ, անբույլատրելի է միջազգային բոլոր կանոններով:

- Բայց ոչ ինքնապաշտպանության դիմած և անկախություն հռչակած ժողովրդի կանոններով:

- Մենք դարձյալ տարբեր ճշմարտությունների հետևից ենք գնում:

- Լավ, ո՞րն է ելքը ըստ ձեզ:

- Որ մենք՝ ադրբեջանցիներն ու հայերը, երկուսով, առանց որևէ միջամտության, գանք փոխհամաձայնությունների: Վրստահ եմ, դա մենք կարող ենք, և հենց այդ երկխոսության մեջ է թաքնված միակ ճշմարտությունը:

- Շնորհակալություն:

Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման անհրաժեշտությունը ՀՀ-ում

Արթուր Ղուկասյան

Մեր հանրադատությունում 900-ից ավելի համայնք կա, և յուրաքանչյուր համայնք յուրահասուկ է և իր չափերով, և սնեսական, մարդկային ղոյնեցիալով, սակայն օրենսդրությունը բոլորին ներկայացնում է նույն ղոյհանջները, սահմանում է նույն ծավալի ղոյհադիր լիազորություններ և ղոյհանջում, որդեսզի այդ ամենն իրականացվի նույն ծավալով և բոլոր սեղերում բնակչոյհանը մասնոցվեն նույն որակի ծառայություններ: Մեր համայնքների մեծ մասը փոքր, թոյլ, համադասասիսան ղեսուրսներ և կարողություններ չունեցող համայնքներ են, որոնք կամ չեն իրականացնում իրենց լիազորությունների մեծ մասը, կամ էլ իրականացնում են ոչ բավարար ձևով: Ըստ համայնքների ֆինանսական և մարդկային ղեսուրսները հնարավորություն չեն սալիս, որդեսզի նրանք ամբողջ

ջոյհամբ մասնոցեն իրենց վերադասիված հանրային ծառայությունները:

Ներկայիս վարչասարածքային բաժանումը կասարելիս հաւելի չի առնվել համայնքների բաժարվածությունն ղոյհ մարդերի: Ամենաստ թվով համայնքներ ունի Ծիրակի մարզը, իսկ ամենաֆիչը՝ Վայոց ձորը, որոնց սարբերությունը 2,7 անգամ է: Ըստ համայնքներ ունեցող մարդերը՝ Սյունիք, Ծիրակ, Լոռի, Արագածոնս, առանձնանում են նաև համայնքների փոքր չափերով: Ըստ գյոյդական և ֆաղաֆային համայնքների՝ մարդերի կազմը կարևոր նեանակոյհուն ունի մարդերի կառավարելիոյհուն և կառավարման արդյունավեոյհուն համար: Հեոսևաբար դեոս է սահմանել համայնքների այն մոսավոր թիվը, որը կարելի է ղնդգրկել մեկ մարդի վարչական սահմաններում: Մյոյս կողմից՝ բոլոր մարդդեսներին և նրանց աւեխասակազմերին սրված են միևնույն իրավասությունները, բայց նրանք աւեխասում են սկզբունբորեն

սարբեր ծանրաբեոնվածոյհուն ղեժիմներում և հարաբերոյհուններում, ինչն ազդում է կառավարչական որոնումների ղնդումման, դրանց ադահովման, կասարման ղնթացի վերահսկման, հեոսարձ կադի ադահովման գործընթացների վրա: Այսեղ դեոս է հաւելի առնել այն փաստը, որ մեծ թվով համայնքներ ունեն կսրսված ղելիեֆ և սարածական մեծ չափեր:

Ներկայումս ՀՀ-ում ղնդհանուր թվով գոյոյհուն ունի 915 համայնք, որոնցից 440-ը (438



Արագածոտն



գյուղական և 2 ֆաղաֆային) կամ 48%-ը ունեն 1000-ից ավելի բնակչություն: Հանրադատության 866 գյուղական համայնքներից 200-ը կամ ընդհանուրի 23%-ը ունեն մինչև 300 բնակիչ, 75-ը կամ ընդհանուրի 8,6%-ը՝ 301-500 բնակիչ, 163-ը կամ 18,8%-ը՝ 501-1000 բնակիչ: **Բնակչության թվով** ամենամեծ գյուղական համայնքը Ախուրյանն է (10046 մարդ), իսկ ամենափոքրը՝ Վերին Շորժան (28 մարդ): Փաստորեն հանրադատության ամենամեծ գյուղական համայնքն ամենափոքրից բնակչության թվով մեծ է շուրջ 358 անգամ:

Բնակչության թվի ցուցանիշներով փոքր են նաև ֆաղաֆային համայնքները: Մասնավորապես՝ 49 ֆաղաֆներից 2-ը կամ 4,1%-ը ունեն 1000 բնակիչ, 1001-5000 բնակիչ ունեն 6 ֆաղաֆներ կամ ընդհանուրի 12,2%-ը, 5001-15000 բնակիչ՝ 18 ֆաղաֆային համայնքներ կամ ընդհանուրի 36,7%-ը: Ընդհանուր առմամբ՝ 15000-ից ավելի բնակիչ ունեն 26 ֆաղաֆային


համայնքներ կամ ֆաղաֆային համայնքների 53%-ը: Միջին հաշվով հանրադատության 1 համայնքում բնակվում է 3599 մարդ, ընդ որում առանց Երևան ֆաղաֆի այդ ցուցանիշը կազմում է 2391 մարդ: Քաղաֆային համայնքներում միջին հաշվով բնակվում է 20148 մարդ (առանց Երևանի), իսկ գյուղական համայնքներում՝ 1406 մարդ:


Համայնքների բնակչության թվերի միջև եղած սարքերությունները կարևոր նշանակություն ունեն այն առումով, որ ղեկավարող համայնքների նկատմամբ որոշակի ֆաղաֆականություն իրականացնելիս մեծ կարևորություն է սալիս այդ ցուցանիշին: Մասնավորապես «Ֆինանսական համահարթեցման նախին» ՀՀ օրենքում բնակչության թվը համարվում է համայնքներին սրվող դրսացիաների հաշվարկման որոշիչ գործոն: Իսկ այս օրենքի դրսացիաների կիրառման արդյունքում փոքր բնակչություն ունեցող համայնքները ստանում են նախատեսված համահարթեցման դրսացիայի չնչին մասը: Այսինքն՝ բնակչության թվի գործոնը սվյալ դեղում ստանում է բացառիկ նշանակություն և կարևորու-

թյուն, որի հետևանքով փոքր ու խոշոր համայնքները ավելի են բևեռացվում ֆինանսական ունակությունների առումով:

Ինչ վերաբերում է համայնքների սարածքներին, ապա համայնքների միջին սարածքը 20 ֆառ. կմ է, իսկ գյուղական համայնքների միջին սարածքը՝ 20,2 ֆառ. կմ: Ամենափոքր գյուղական համայնքի սարածքը Դուրեվանի համայնքին է՝ 0,3 ֆառ. կմ, իսկ ամենամեծը՝ Գեսափ համայնքինը՝ 117,8 ֆառ. կմ: Այսպիսով, **սարածքով** ամենամեծ գյուղական համայնքը ամենափոքրից մեծ է 370 անգամ: Համայնքների վարչական սարածքների շտակարար կեիող ՀՀ ամբողջ սարածքում կազմում է 62 տոկոս կամ 18,6 հազար ֆառ. կմ:

Ըստ մարզերի՝ ֆաղաֆային համայնքները անհավասարաչափ են բաշխված: Արագածոտնի, Արմավիրի և Վայոց ձորի մարզերում կան 3, Տավուսում և Արարատում՝ 4 ֆաղաֆներ, իսկ Լոռու մարզն ունի 8, Սյունիքը և Կոտայքը՝ 7 ֆաղաֆներ: Հարկ է





Լոռի

նեել, որ Լոռվա մարզի 8 ֆաղաֆներից 3-ը ունեն մինչև 5000 բնակիչ, իսկ Մյունիփի մարզի 4 ֆաղաֆները ունեն մինչև 10000 բնակիչ:

Նույնդիսի անհավասարաչափություն կա նաև գյուղական համայնքների թվաքանակում: Ամենաբարձր գյուղական համայնք ունի Արագածոտնը՝ 111 համայնք, Լոռին՝ 105, Մյունիփը՝ 102, Գեղարփունիփը՝ 88: Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, աղբահավաքության ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են հենց այս մարզերում, որտեղ լավ են գյուղական համայնքները: Սա դառնալից է այս մարզերի գյուղատնտեսության համար անբարենպաստ դառնալից:

Ուսումնասիրելով նախադրոցական, կրթական, մար-

զական, առողջապահական, անասնաբուժական, հակահրդեհային կազմակերպությունների և այլ կարևոր ծառայություններ մատուցող հիմնարկ-ձեռնարկությունների սեղաբաժնումը ըստ մարզերի, հարկ է նշել, որ վերոնշյալ կազմակերպությունները հիմնականում կենտրոնացված են ֆաղաֆներում՝ մարզային և նախկին քաղաքային կենտրոններում: Քիչ են այն գյուղական համայնքները, որտեղ գործում են առողջապահական և մարզական կազմակերպություններ, ինչպես նաև երաժշտական և արվեստի դպրոցներ:

Եվ այսպես, համայնքների իրավիճակի վերլուծությունը թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ ներկայումս անհնար է խորացնել աղակենտրոնացման գործընթացը և սրամադրել համայնքներին լիազորությունների լրացուցիչ ծավալ,

ֆանգի դրանցից մեծ մասը չի կարողանում դասաճ կերպով իրականացնել արդեն սրվածները: Մյուս կողմից՝ ֆաղաֆային համայնքների մեծ մասն ի վիճակի է սահմալ և իրականացնել մի շարք լիազորություններ (սոցիալական ծառայություն, ֆաղաֆային կազմակերպության ամբողջականացում), որոնք այսօր զգնվում են կենտրոնական կառավարության լիազորությունների օգնակում:

Համայնքների իրավիճակի վերլուծությունից դարձ է դառնում նաև, որ այս ոլորտի հիմնական խնդիրները կապված են գյուղական համայնքների հետ: Ինչպես արդեն նշվել է, այդ համայնքների մեծամասնությունում բնակչությանը մատուցված ծառայությունները լավ ցածր մակարդակի վրա են զգնվում կամ ընդհանրապես բացակայում են, ինչը մասնակիորեն կապված է ֆինանսական և կադրային ռեսուրսների անբավարարության հետ: Սակայն, նրանց ֆինանսավորման դարձադրույթն ավելացումը չի կարող լինել ամբողջովին արդարացված և արդյունավետ միջոց, ավելի լավ՝ դա կլինի դեպքերի առանց այն էլ ոչ մեծ ֆինանսական միջոցների փոփոխում:

Տարածքային զարգացման անհամաչափությունները Հայաստանում սկսել են խորանալ սոցիալական աճի արագացմանը զուգընթաց՝ 2000 թ.-ից, և հիմնականում արտահայտվում են մայրաքաղաք Երևանի սոցիալական դերի և նշանակության աճով, որի արդյունքում կենտրոնական կառավարության արբերությունը Երևանի և Հայաստանի մարզերի միջև անընդհատ աճել է վերջին

սարիներին հասնելով մտահոգիչ չափերի: Տարածաշրջանի զարգացման ժամանակակից փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ սննդամթերքի զարգացումը, համադասարանական տարածաշրջանի ֆաբրիկայանության բացակայության դեպքում, որդես կանոն, խորացնում է տարածաշրջանի անհամաչափությունները:

Այսպիսով, գոյություն ունեցող վիճակագրական տեղեկատվության հիման վրա համայնքներում իրականացվող ծառայությունների մատուցման իրավիճակի վերլուծությունը հնարավորություն է ընձեռում հիմնավորելու միջհամայնքային միավորումների ստեղծման անհրաժեշտությունը՝ որդես համայնքների կողմից ծառայությունների լիարժեք մատուցման


աղահովման միջոց:

Այսպիսով տարածաշրջանի ֆաբրիկայանության մեակումը և իրականացումը, որը նոդատակաուղղված կլինի տարածաշրջանի զարգացման անհամաչափությունների մեղմացմանը և հետ մնացող տարածքների սննդամթերքի զարգացման արագացմանը, հանդիսանում է ՀՀ կառավարության հիմնական ռազմավարական գերակայություններից մեկը: Տարածաշրջանի զարգացման արդյունավետ ֆաբրիկայանության իրականացումը տայմանավորված է նաև համայնքային զարգացմանն ուղղված արդյունավետ կարողությունների առկայությամբ: Այս խնդիրների լուծման համար առաջարկվում է երկու տարբերակ.

* Համայնքների խոտորացում, որը տես է իրականացվի հարևան համայնքների միաձուլ-

մամբ, ինչը հնարավորություն կտա կրճատել համայնքների թիվը, նվազեցնել վարչական ծախսերը, կենտրոնացնել ֆինանսական միջոցները՝ ավելացնելով տարադիր լիազորությունների ֆինանսավորումը: Միավորված համայնքների ֆինանսական միջոցների հաշվին կարելի է լուծել այդ համայնքների սոցիալ-սննդամթերքի հիմնախնդիրները, բարձրացնել միջոցների օգտագործման արդյունավետությունը:

* Միավորել փոքր համայնքները միջհամայնքային միավորներում, դրանց վերադասել այն լիազորությունները, որոնք այդ համայնքները առանձին չէին կարող կատարել: Դա հնարավորություն կտա այդ համայնքներին աղահովելու հան-



Գեղարֆունիք

րային ծառայությունների կասարումը, բարձրացնելու դրանց որակը և մասշտիբությունը:

Ինչդեռ սեսնում ենք, համայնքների միջև համագործակցության կարիք է զգացվում այն դեպքերում, որ առանձին-առանձին վերցրած դրանց վարչական մարմինները չեն կարողանում լուծել իրենց առջև ծառայած խնդիրները, քանի որ միայն որակյալ աշխատակազմով դաշտային ծախսերը կարող են լինել ընդհանուր: Ըստ դեղատեսակի անհմտության է վարչական մեծ ծախսերի կասարումը: Այս ամենը դեռ է բարեփոխումների արդյունքում լինելու, և դեռ է ունենալ մեծ և ուժեղ համայնքներ՝ բնակչության մեծ թվով և

ավելի մեծ սնտեսական ռեսուրսներով: Սա հնարավորություն է սալու, որդեսպի խոտորացված համայնքում սարի իր բնակավայրից ինչ-որ մեկում կարողանա լուրջ ծրագիր իրականացնել՝ կուսակելով միջոցները մեկ տեղում: Օրինակ, եթե այսօր ինչ-որ համայնք ունի սեփական եկամուսներ 15 մլն. դրամի չափով, ապա խոտորացման արդյունքում դա կարող է վերածվել 50-60 մլն. դրամի, ինչն արդեն էական ռեսուրս է: Դա նշանակում է, որ կարելի է կառուցել մանկապարտեզ, իրականացնել գազաֆիկացում, ինչն արդեն այսօր լինում է սալիս:

Միջհամայնքային համագործակցության կարիք է զգացվում

ջրամատակարարման, աղբահանության, համայնքների բյուջեների հարկային մուտքերի ադահովման և այլ խնդիրների լուծման դեղում: Մրանով է հիմնականում դայմանավորված միջհամայնքային համագործակցության ձևավորման և որոշ համայնքային հանրային ծառայությունների համատեղ մատուցման անհրաժեշտությունը: Ասվածը, առաջին հերթին, վերաբերում է դարձադի լիազորություններին: Սակայն, միջհամայնքային համագործակցությունը ոչ դակաս կարևորվում է նաև դասվիրակված և կամավոր լիազորությունների իրականացման դեղում: Համայնքների միջև համագործակցության անհրաժեշտությունը չի սահմանափակվում միայն առանձին լիազորությունների կասարման տեսանկյունից:

Նված բոլոր առավելությունների կողմին առանձնահատկ տեղ է գրավում միջհամայնքային միավորումների դերը դեսական միասնական սարածային ֆադաֆականության իրականացման համատեստում: Այժմ այդ խնդիրը վերադադարված է մարդուներին, որոնք կառավարության ներկայացուցիչներն են սարածաբաններում և ադահովում են փոխադարձ կադր դեսական կառավարման և տեղական ինֆրակառավարման միջև: Միջհամայնքային միավորումները կարող են մեծ ազակցություն ցուցաբերել այդ հարցում՝ ընդհուդ մինչև որոշ գործառույթների իրականացումը:

Այս բարեփոխումների ընթացում ակնկալվող արդյունքները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.



Սյունիք

1. Մարդկային ռեսուրսների համախմբում

* Կավելանա նոր ստեղծվող համայնքի բնակչության թիվը, և մարդկային ռեսուրսները, ինչը որակյալ համայնքային ծառայողներով կազմված համայնքի աշխատակազմի ձևավորման հնարավորություն կստեղծի:

* Չգալիորեն կբարձրանա համայնքի կառավարման արդյունավետությունը (որակյալ կադրեր, ընդլայնված կառավարման օբյեկտներ և այլն):

* Բազմաբնակավայր համայնքներում սեղական ինֆրակառավարման մարմինների ընտրությունները կլինեն ավելի մրցակցային և զգալիորեն կնվազեցնեն ազգակցական կադրերի հնարավոր բացասական ազդեցությունները:

2. Ենթակառուցվածքների համախմբում և ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացում

* Համայնքային ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ է ենթակառուցվածքների կենտրոնացումը սեղական ինֆրակառավարման վարչական մեկ միավորում (համայնք), ինչը հնարավորություն կսա կենտրոնացնել փոփոխած ռեսուրսները և դրանց կառավարումն իրականացնել մեկ կենտրոնից: Այդպիսով հնարավորություն կստեղծվի մշակել և իրականացնել համայնքային ֆառաֆականություն, որը փոքր համայնքներից շատերում բացակայում է:

* Ենթակառուցվածքները կծառայեն ավելի մեծ թվով շահառուների, ինչը կնվազեցնի

ծառայությունների ինֆրաբնագրի և կնդասի արդյունավետության բարձրացմանը: Չգալիորեն կփոփոխան միավոր ծառայության վրա կատարվող ծախսերը:

* Կնվազի ենթակառուցվածքներով չադահովված համայնքների թիվը, ինչը հնարավորություն կսա ենթակառուցվածքների գծով կադրիսալ ներդրման գումարներն (համայնքային բյուջեի միջոցներ և դեռական նդասակային հասկացումներ) առավել նդասակային և կենտրոնացված օգտագործելու համար: Արդյունքում կբարձրանա անհրաժեշտ ենթակառուցվածքներով ադահովված համայնքների թիվը:

* Նոր ստեղծվող համայնք, ունենալով ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները, կմատուցի օրենքով իրեն վերադահված լիազորությունների ավելի մեծ մասը:

3. Ֆինանսական կարողությունների ուժեղացում և իրականացվող լիազորությունների Երջանակի ընդլայնում

* Համայնքների միացման արդյունքում նոր ստեղծված համայնքի աշխատակազմի թվաֆանակը զգալիորեն ավելի ֆիչ կլինի, ֆան այդ համայնքի կազմի մեջ միավորված նախկին համայնքների աշխատակազմերի հանրագումարային թվաֆանակը: Դա հնարավորություն կսա օրենքով սահմանված Երջանակներում սնեստված միջոցների հաժվին ավելի բարձր աշխատավարձեր առաջարկել համայնքային ծառայողներին՝ խթանելով որակյալ ծառայողների մոտիքը համայնքի աշխատակազմ: Բացի դրանից, զգալիորեն կկրճատվեն նաև ադարաի դահդանման ծախսերը, որի արդյունքում կավելանան բնակչությանը ծառայություններ

մատուցելուն ուղղված ֆինանսական միջոցների չաֆերը:

* Կավելանան ֆինանսական ռեսուրսները, որոնց Ենտրիվ լուրջ հնարավորություն կստեղծվի համայնքային ծագրերի մշակման և իրականացման համար: Նոր ձևավորվող համայնքի բյուջեն, բացի նախկին համայնքների բյուջեների մեխանիկական գումարն արագուղելուց, կարող է նաև ավելանալ հարկային բազաների ճժգրման, նոր սեղական սուրֆեր և վճարներ սահմանելու և հարկերի հավաֆգրման աշխճանի բարձրացման հնարավորությունների մեծացման արդյունքում:

* Ֆինանսական և այլ ռեսուրսների կենտրոնացումը հնարավորություն կսա նոր ձևավորվող համայնքին մատուցելու օրենքով նախատեսված համայնքային այլ ծառայություններ, որոնք նախկին համայնքները չէին մատուցում:

4. Լրացուցիչ դրական հեռանգներ

* Համայնքներին դասվիրակված լիազորությունների Եարունակական փոխանցման հնարավորությունների ստեղծում:

* Հեռագա ադակենտրոնացման համար նդասավոր դայմանների ստեղծում:

* Համադեռական ծագրերի իրականացման հնարավորությունների մեծացում:

* Վարչական սարաժֆների խոժոռացման հեռանգով սնեստության ճյուղերի, հասկադեռ գյուղատնեստության զարգացման համար ավելի մեծ հնարավորությունների ստեղծում:

* Համայնքների նկատմամբ ղեկավարող վերահսկողության իրականացման հեռացում, արդյունավետության բարձրացում և այդ ուղղությամբ իրականացվող ծախսերի նվազեցում:

Ուսումնասիրելով համայնքների խոստացումից և միջհամայնքային միավորումների ձևավորումներից ակնկալվող արդյունքները, փորձենք առաջարկել այն ուղիները, որոնք կնպաստեն միջհամայնքային համագործակցության կատարելագործմանը, սեղական ինֆնակառավարման համակարգի զարգացմանը:

Եվ այսպես, հանրառության վարչասարածքային օղակալ բաժանման իրականացումը սեղական ինֆնակառավարման համասեփսում ընդգրկում է մի քանի խնդիր: Այստեղ առաջին լրանում է համայնքների խոստացումը, որն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես նախկին ավանդույթները, այնպես էլ առկա իրավիճակի ղահանջները: Խորհրդային տարիներին Հայաստանում գործում էին 479 գյուղական խորհուրդներ՝ ներկայիս 871 գյուղական համայնքների փոխարեն: Դա նշանակում է, որ շատ համայնքներ նախկինում ընդգրկված են եղել միևնույն գյուղական խորհուրդների կազմում, և դա կարելի է վերականգնել: Ավելին՝ համայնքների թիվը կարելի է կրճատել նաև սեղական ինֆնակառավարմանը ներկայացվող այն ղահանջից ելնելով, ըստ որի անկախ այն բանից, թե որտեղ է բնակվում բաղաբացին, նա ղեկ է սանա որակյալ հանրային ծառայություններ:

Վարչասարածքային բաժանման օղակալացման հաջորդ խնդիրը միջհամայնքային միավորումների ձևավորումն է: Միջհամայնքային միավորումների ձևավորման առաջնային խնդիրներից է ֆինանսական և մարդկային համեմատաբար թույլ կարողություններ ունեցող համայնքներին ղարտաղ լրագործությունների իրականացման հարցում աջակցելը, դրանով իսկ նպաստելով սեղական ինֆնակառավարման զարգացման գործընթացում համայնքների միջև բնեղվածության աստիճանի նվազմանը: Ընդհանուր առմամբ, միջհամայնքային միավորումները կարելի է ներկայացնել որպես սեղական ինֆնակառավարման բաղկացուցիչ մաս, որոնք իրենց կառուցվածքային առանձնահատկությունների շնորհիվ կատարում են ինչպես համայնքների որոշ գործառույթներ, այնպես էլ ղետության կողմից ղասվիրակված լրագործություններ: Անհրաժեշտ է նշել, որ շատ դեղերում կամավորության և ղարտաղության սկզբունքները կարելի է գուղակցել: Համայնքների բնակիչների կարծիքը հաշվի առնելու և նրանց շրջանում լայն բացատրական աշխատանքներ տանելու դեղում կամավորության սկզբունքով հնարավոր է ձևավորել մեծ թվով միջհամայնքային միավորումներ: Գաղտնիք չէ, որ ներկայումս բավականին մեծ է Հայաստանի վարչասարածքային նախկին շրջանային բաժանման վերականգնման կողմնակիցների թիվը: Եթե միջհամայնքային միավորումների առաջարկվող համակարգը համընկնի կամ գրեթե համընկնի նախկին շրջանային համակարգի հետ և դրանց ձևավորման ընթացում կիրառվի կամավորության սկզբունքը, աղա դա կտա դրական արդյունքներ: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ղետության և բնակչության շահերից

եղնելով ղեկ է գործի նաև ղարտաղության սկզբունքը: Միջհամայնքային միավորումների մողելն ունի կառավարման առանձին մակարղակի հատկանիշներ և դրանց ձևավորումն օրենքով ամրագրելն առավել նպաստակառարմար է: Օրենքով անհրաժեշտ է ամրագրել նաև միջհամայնքային միավորումների և դրանց կազմում ընդգրկված համայնքների լրագործությունները, դրանց ինֆնուրույն բյուջեների եկամուտների աղբյուրները և սեփականությունը: 15000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքները սանում են հատուկ կարգավիճակ և իրականացնում են համայնքների ու միջհամայնքային միավորումների բողր լրագործությունները:

Անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրություններ ու հետազոտություններ կատարել համայնքների խոստացման և միջհամայնքային միավորումների ստեղծման ընթացում: Մահմանված ընդհանուր սկզբունքների ու չափանիշների հիման վրա ամեն անգամ ղեկ է գուղաբերվի առանձնահատուկ մոտեցում: Միջհամայնքային միավորումների ստեղծման կամավոր նախաձեռնությունների դեղում անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել դրանց նպաստակառարմարությունն ու այլընտանցները և հետ միայն, անհրաժեշտության դեղում, հիմնաղիր համայնքներին առաջարկել փոփոխություններ կատարել:

«ԱԶԳ», «ԱԶԳՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԸ

ԵՎ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշոտ Շահինյան

պատմ. գիտությունների թեկնածու

Ազգ, ազգություն, ժողովուրդ հասկացությունների հայ միջնադարյան ըմբռնումները, պատկերացումները գիտական, տեսական հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն ինքնին վերցրած, այլև հասարակական մեծ հնչեղություն ունեն ներկա գործնական քաղաքականության իմաստով:

Ո՞րն է հիմնահարցը:

Նախ, նշված հասկացությունները ողջ միջնադարում տարբեր մտածողների, պետական-քաղաքական, հասարակական ու կրոնական հաստատությունների կողմից ունեցել են համանման մեկնաբանություններ, ձևակերպումներ, ինչը կրոնական-դավանաբանական բաղադրիչի միակողմանի ընդգծումն է, բացարձակացումը: Եվ դա պատահական չէր: Արդեն 4-5-րդ դդ. ձևավորվում էին եկեղեցական թեոկրատիկ իշխանության պատկերացումները թե՛ քրիստոնեության մեջ ընդհանրապես և թե՛ հայ իրականության մեջ մասնավորապես: Հովհան Ոսկեբերանը, Ավգուստինոս Երանելին (4-5-րդ դդ.) իրենց գրվածքներում շեշտում էին եկեղեցական իշխանության առաջնությունը աշխարհիկ իշխանության նկատմամբ: Համաձայն այդ գաղափարախոսության՝ եկեղեցու իշխանությունը միայն որպես աստծու տիրապետություն կարող է իրականացնել մարդկանց իսկական ազատությունը, միասնությունն ու հավերժական խաղաղությունը: Հայաստանի եկեղեցու առաջնորդների շրջանում ևս ձևավորվեցին նմանատիպ պատկերացումներ ու գործելակերպ:




Ավգուստինոս Երանելի (4-5-րդ դդ.)

Իշխանության հավակնող հոգևորականությունը ձգտում էր ոչ միայն իր իշխանությամբ հավասարվել թագավորական իշխանությանը, այլև յուրովի

ներկայացնել հայ իրականությունը՝ ստեղծելով նոր արժեքային համակարգ, ապահովելով իրեն առաջնային դիրքեր: Այսպես, խոսելով քրիստոնեության հաստատման իրադարձությունների մասին, Ազաթանգեղոսը հաղորդում է. «Գործը երանելի Գրիգորի ձեռքը հանձնվեց, որպեսզի նախկին հայրենի, հնամենի և նախնիների չաստվածները անհիշատակ դարձվեն, ջնջվեն» (Ազաթանգեղոս, «Հայոց պատմություն», Եր., 1983 թ., էջ 437): Իսկ Մ. Խորենացին խոսելով Վրթանեսի որդու Գրիգորիսի գործունեության մասին Հայոց արևելյան կողմում՝ Փայտակարանում, գրում է, որ նա «պատժելու կողմից՝ թագավորին հավասարվեց» (Մ. Խորենացի, «Հայոց պատմություն», Եր., 1961 թ., էջ 267): Նմանատիպ տողերի ենք հանդիպում նաև մյուս պատմիչների մոտ: Իսկ Հովհան Մամիկոնյանը արդեն հստակ ձևով դիմադրողներին ներկայացնում է ոչ ազգային անվանումներով (հյուսիսցիք, գյուղացիք, տեղացիներ, քրմեր և այլն), իսկ քրիստոնյաներին՝ հայեր, հայոց գորք, հայ իշխաններ և այլն (Հ. Մամիկոնյան, «Տարոնի պատմություն», Եր., 1989 թ., էջ 35-45):

Այսպիսով, արդեն վաղ միջնադարում ձևավորվում էր հայ եկեղեցու թեոկրատիկ իշխանության ձգտումների գաղափարական նախադրյալներից մեկը. քրիստոնյան նույնացվում էր հայի, հայ ազգի, հայ ժողովրդի հետ:

Ինչևէ, հասարակական-քաղաքական միտքը լայն առումով (ներառյալ կրոնական պատկերացումները, աստվածաբանությունը) միայն նոր ժամանակներում ձերբազատվելով արտաքին շահագրգռություններից և «բացարձակ» ճշմարտություններից՝ կարողացավ գիտական բացատրություն տալ այս և նմանատիպ այլ հարցերի: Որպես սոցիալ-էթնիկական ընդհանրություն՝ ժողովուրդ, ազգություն հասկացությունները հասարակագիտության մեջ դիտարկվում են որպես ազգ հասկացությանը նախորդող հասկացություններ՝ իրենց հատկանիշների հասունացման աստիճանից ելնելով: Նրան հատուկ են ազգի բոլոր հատկանիշները: Այդ հատկանիշներն են լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի և սոցիալական կապերի, ազգային ինքնագիտակցության, հոգեբանական կազմի և մշակույթի որոշակի գծեր, ինչպես նաև շատ թե քիչ ընդհանուր ծագումը: Ինչ խոսք, այս ընդհանրությունը չի կարելի սահմանափակել այդ հատկանիշներից մեկով կամ մի քանի-



Մ. Խորենացի

սով, այլ պետք է վերցնել հատկանիշների ամբողջությունը: Համաձայն ընդունված տեսակետի, ազգությունը, ժողովուրդը սկզբնապես հանդես է եկել նախնադարյան-համայնական հարաբերությունների քայքայման ժամանակաշրջանում կամ քաղաքակրթության ձևավորման փուլում: Այնուհետև՝ անընդհատ զարգացել է, անցնելով որակական փոփոխության աստիճաններ:

Մեր թվարկության սկզբում ազգության ընդհանրության աստիճանի էր հասել այն ժամանակվա մարդկության մի փոքր մասը միայն: Միջին դարերում, ֆեոդալիզմի ծաղկման շրջանում, Եվրոպայում և Ասիայում սկսվեց նոր ազգությունների կազմավորումը: Նրանց հետագա զարգացումը ամփոփվում էր ժամանակակից ազգի ձևավորմամբ:

Այս է, խիստ ընդհանուր գծերով, մարդկային սոցիալ-էթնիկական ընդհանրության զարգացման ընթացքը: Մեր կարծիքով, հիմնահարցի պարզաբանման, ընկալման դժվարությունը հետևյալն է. տարբեր ժամանակաշրջաններում պետությունը, քաղաքական, հասարակական-կրոնական հաստատությունները, անհատ մտածողները ելնելով իրենց շահագրգռություններից շեշտել են հատկապես հասկացության, երևույթի այս կամ այն կող-

մը, տերիտորիայի, քաղաքական կազմակերպման, լեզվի կամ սոցիալ-տնտեսական փոփոխությունների դերն ու նշանակությունը: Այսպես, սոցիալ-տնտեսական կողմի շեշտադրումը ուժեղացավ 19-րդ դարի 2-րդ կեսից և իր գործնական կիրառումը ստացավ արևելյան ընկերվարական երկրներում, հատկապես ԽՍՀՄ-ում: Ազգության քաղաքական հատկանիշը ընդգծվեց գաղութային երկրների ազգային-ազատագրական շարժումների ընթացքում: Իհարկե, այս երևույթների դրսևորումներն ավելի վաղ են սկսվել, դեռ առաջին բուրժուական հեղափոխությունների ընթացքում՝ կրոնական գունավորումներով, քաղաքական անհանդուրժողականությամբ: Նկատելի է, որ այս բոլոր ընդգծումներում երևում է ազգության երևույթի հասարակական-պատմական կողմը, այն հատկանիշները, որոնք փոփոխվում են պատմական զարգացման ընթացքում: Լռության է մատնվում ազգության, ժողովրդի այն հատկանիշների խումբը, որոնք «անփոփոխ» են, ունեն բնական հիմքեր՝ ծագումը, էթնո-հոգեբանական գոյացումները, դարավոր հայրենիքի գոյությունը և դրանց արժեքային-ինացական ընկալումները: Եվ դա պատահական չէ: Ինչպես էլ «փոփոխվեն» հասարակական, քաղաքական, կրոնական բանաձևումները (կամ ցանկանան փոխել), անգամ էթնոսի, ազգության անվանումները, միևնույն է, նրանց բնական հիմքերը, մարդաբանական կողմը, հոգեբանական ընկալումները, էթնո-մշակութային ընթացումները, իդեալները, կենցաղավարումը, ներքին փորձը իր բազմազան դրսևորումներով մնում են անփոփոխ կամ գրեթե անփոփոխ: Այլ կերպ ասած, ազգության, ժողովրդի, նաև ազգի գոյաբանական կողմը հաստատուն է և հարաբերականորեն ունի մեծ կայունություն: Այլ խնդիր է, որ այս կողմը լուրջ ուսումնասիրությունների առարկա դեռ չի դարձել: Հասարակության կողմից էլ դեռևս պատշաճ չի ընկալվում: Հիշենք թեկուզ մինչև այժմ շարունակվող բանավեճը, թե պատմական մտածողությունը իր արժեքային-էնոցիոնալ լրացումներով հանդիսանում է ի վերջո հասարակական գիտակցության ձև, թե ոչ: Անկախ այս քննարկումներից, պատմական գործընթացները, փաստերը համառ են: Այսպես, հիմնականում ինդուստրիալ հասարակության ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական, գիտական-կրթական և այլ բարեփոխումներից հետո (19-20-րդ

դդ.) ի հայտ եկան նոր երևույթներ, որոնցից մենք կշեշտեինք հատկապես «էթնիկական վերածնունդի» իրողությունը: Աշխարհի էթնիկապես ամենախաղաղ կետերն անգամ այսօր դրսևորում են էթնո-մշակութային «անհանգստություններ»՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Շվեյցարիա և այլն: Մենք խնդիր չունենք ուսումնասիրելու նշված երևույթները, այլ պարզապես փաստն ենք ընդգծում: Ավելի ճիշտ, կփորձենք մի համառոտ անդրադարձով պարզել պատմական մի դրսևորում մեր պատմական անցյալից:

Եվ այսպես, ազգության, ժողովրդի նկատված միակողմանի ընկալումը հատուկ է եղել նաև հայ հասարակական-ինաստասիրական, սոցիալ-քաղաքական միջնադարյան մտքին: Ինչպես են պատկերացրել միջնադարյան հայ իրականության մեջ ազգ, ազգություն, ժողովուրդ հասկացությունները: Որո՞նք են եղել նրանց բովանդակային բաղադրիչները:

Միջնադարում համընդհանուր ճանաչում ունեն «արտաքոյ Հայաստանեայց եկեղեցոյ չիք ազգութիւն» գաղափարը: Այլ կերպ ասած, ազգայինը, ազգությունը նույնացվում էր հայոց եկեղեցու դավանանքի ընդունման հետ, իսկ «այլազգին» նույնանում էր «այլակրոնի», «այլադենի», «հեթանոսի» կամ «մահմեդականի» հետ՝ լինելին դրանք հեթանոս հայեր, թե այլ դավանանք ընդունած հայեր: Ազգության, ազգի, ժողովրդի հիմնական հատկանիշ հռչակելով «Հայաստանեայց եկեղեցոյ» պատկանելը, միջնադարի ողջ ընթացքում, սկսած քրիստոնեության ընդունման պահից, հայ եկեղեցական մտավորականները փաստորեն հայ ժողովրդին բաժանեցին հատվածների, դրանով սկիզբ դրեցին հայ ժողովրդի տարբեր շերտերի փոխադարձ օտարմանը: Նույն մտայնությունն էր նաև քրիստոնյա մյուս ժողովուրդների մեջ, իսկ մեր հարևանները չէին ուշանում առիթը օգտագործելուց: Այսպես, X դարի վրաց մի վարքագրող արձանագրում էր՝ «Վրաստան» է կոչվում հենց ծավալուն այն երկիրը, ուր պատարագ են մատուցում և ամեն տեսակ աղոթքներ կատարում վրացական լեզվով (Աշ. Հովհաննիսյան, «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», գիրք 1, 1957 թ., Եր., էջ 114-115): Կամ 12-րդ դարի պատմիչ Պ. Տարոնացին գրում էր, թե հայախոս ծաթերը ազգով «հույն» էին համարում իրենց, քանի որ հարել են հունադավան եկեղեցուն: Դավանափո-

խության հետևանքով «հույներ» սկսեցին կոչվել Տարոնի և Սասունի նշանավոր Թոռնիկյանների տոհմի շառավիղները: 7-րդ դարում քաղկեդոնականությունը նվաճելով Վրաստանը սպառնում էր իշխող դիրք ստանալ Աղվանքում և Հայաստանի հյուսիսում: Քաղկեդոնացվում են Տայքի հայերը: X դ. քաղկեդոնական է դառնում Աղվանից Ատրրներսեի թագավորը, նրա արքունիքը: Այս երևույթը հայ եկեղեցին ընդունում է թշնամանքով: Արգելվում են ամեն տեսակ կապերը, բացառությամբ առևտրից: Արդյունքում տեղի է ունենում քաղկեդոնացած հայերի հասարակական օտարում՝ «վրացիացում» և «հունացում»: Նույն երևույթն է նաև երկրի կենտրոնում և հարավում: Իսլամացումը նույնացվում է «արաբացման», «թուրքացման», «տաճիկացման» կամ «քրդացման» հետ (Տես, օրինակ, Ջաքարիա Ագուլեցի, «Օրագրություն», 1938 թ., Եր., էջ 103, 140): Այսպես նաև «հոռոմ» կամ «ֆրանկ» էին կոչում բոլոր հոռոմադավաններին և հունադավաններին: Խոսելով Մակուի լատինադավան հայերի 1436 թ. տարագրման մասին, ապագա հայ կաթողիկոս Գրիգոր Ջալալբեկյանը մի հիշատակարանում նշավակում է նրանց որպես «մարդաշատ անիծյալ ազգի»: Առավել անհանդուրժող և թշնամական էին եկեղեցու և աղանդավորների փոխհարաբերությունները: Հայ պավլիկյանները «օտար», «հունական» էին համարում այն ամենը, ինչը չէր համատեղվում իրենց արժարժած հայացքների հետ: Թոռնիկեցիները հակադրվելով հայ իշխող դասերին՝ իրենց հայտարարում էին, թե «մեք յԱրամեան գնդէն ենք և հաւատով համեմատ նոցա»: Իրենց դավանանքը համարել են հայ ժողովրդի դավանանք: Իրենց հերթին հայ եկեղեցու ներկայացուցիչները, թոնդրակյաններին համարում էին «հայոց ազգի» ընդհանրությունից դուրս գտնված ազգություն: Անգամ Գր. Մագիստրոսի թղթերի վերնագրերից մեկում թոնդրակյանները նշվում են առանձին «ազգ»: Ինչպես վկայում է XI դ. պատմիչ Ա. Լաստիվերցին, «հայ ժողովուրդը բաժանվեց երկու մասի», որն ըստ էության ընդգրկել էր հասարակության բոլոր շերտերը (Տես Ա. Լաստիվերցի, «Պատմություն», 1971թ., Եր., էջ 89): Իհարկե, հոգևորական պատմիչը ելնում էր ազգության և ժողովրդի եկեղեցական ըմբռնումներից:

Այսպիսով, ելնելով ազգության, ժողովրդի կրոնա-դավանաբանական հատկանիշի միակողմանի

ընդգծումից, հայ կրոնա-հասարակական միտքը հայության իր պատկերացրած ամբողջությունից դուրս համարեց հայ այլադավաններին, հեթանոսներին, մուսուլմաններին, աղանդավորներին, քաղկեդոնական ուղղության պատկանողներին և այլն: Նրանց սկզբում անվանեցին այլազգիներ, իսկ հետագայում, կապված պատմական իրադրության և իր ժամանակի «լեգիտիմության» ըմբռնումների հետ, անվանափոխեցին «թուրքեր», «տաճիկներ», «վրացիներ», «պարսիկներ», «քրդեր», «արաբներ», «հույներ», «հոռոմներ» և այլ էթնոնիմներով: Բացի այս էթնո-կրոնական հատվածային ընդգծումներից, ժամանակակիցների վկայություններում (հայ, օտար) նշվում են մի քանի տասնյակ «անցողիկ» փուլում գտնվող էթնո-կրոնական միավորներ. արևորդիներ (Սիմոն Չամոստացի), ծայթեր (Ուխտանես), կես-կես հայեր, Չանտրի թուրքեր, ավշարներ, զազաներ, ալխիդներ, կես-խաչեր, Հաքյարի իշխանությունը. Շամոյաններ (Վան-Ոստան), Ռոժակներ (Բաղեշ), Խիզանի, Մպարակերտի, Դըմբըլի ցեղախմբերը, թախթաջիները, վանկուլիները, Դանիշմանների (Արծրունիներ) ռազմականացված իսլամացած շարժումը, Կարամանօղլուները, Բագոյենք, Սլկունենք, Մնգոյենք և այլն և այլն:


Իհարկե, չենք բացառում նոր պատմական, էթնիկական բացահայտումներ այս կապակցությամբ: Որքանով է հիմնավոր կրոնական-դավանաբանական փոփոխությունները ներկայացնել ազգության փոփոխություն, ձուլում, դիմազրկում: Անկասկած, ազգության, ժողովրդի, ազգի ժամանակակից գիտական, պատմափիլիսոփայական ըմբռնումների տեսակետից դա հիմնավոր չէ և չի համապատասխանում պատմական իրականությանը: Հարկադիր լեզվական փոփոխություններն էլ չեն «լեգիտիմ» դարձնում այս անցումները: Առկա են հայ և օտար պատմիչների, ճանապարհորդների բազմաթիվ վկայություններ, ժամանակաշրջանը ուսումնասիրած պատմաբանների հետազոտություններ այն մասին, որ Հայաստանի տարբեր շրջաններում, նահանգներում իշխած մուսուլման կամ «այլադավան» կառավարիչները, որոնք մեր եկեղեցու գործիչների և հոգևորական պատմիչների կողմից ներկայացվել են «տաճիկ», «արաբ», «քուրդ», «պարսիկ» կամ «անհայտ ծագմամբ ստրուկ», բավականին բարյացակամ են եղել քրիստոնյա հայության նկատ-

մամբ՝ խրախուսել են տնտեսության զարգացումը, առևտրի աճը և քաղաքաշինությունը, մշակույթի և դպրության զարգացումը: Անվանի պատմաբան Հ. Մանանդյանը այս կապակցությամբ նշում է, որ Չաքարյանների կողմից մուսուլմանների իշխանությունից ազատագրված շրջանները գտնվում էին զարգացած, բարվոք վիճակում (Հ. Մանանդյան, «Երկեր», հ. 6, 1985 թ., Եր., էջ 191):

Հազիվ թե դա թելադրված լիներ լոկ տնտեսական նպատակահարմարությամբ և ընթացիկ քաղաքականությամբ: Այնուհետև, ճիշտ է, լեզվաբանության քաղաքագիտական տեսությունը ստեղծվել է 19-20-րդ դդ., սակայն քաղաքական գործընթացները լեզվաբանության պահանջ ունեին նաև անցյալում, այդ թվում միջնադարում: Այն համապատասխան էր ժամանակի քաղաքական կուլտուրայի մակարդակին և ժողովրդի մենթալիտետին. ծագման լեզենդներ, խորհրդավոր և միստիկական ուժերի մասին խիստ տարածված էպիկական պատկերացումներ և այլն: Եվ պետք է պատմական իրականությանը համապատասխան համարել իշխող դասակարգի կազմի փոփոխություններն ուղեկցող «հեռավոր» և «զգաստացնող» անվանումները: Այնպես որ «տաճիկ», «քուրդ», «արաբ», «պարսիկ», «ճենացի», «հոռոմ» և այլ անվանումները չպետք է մեզ շփոթության մեջ գցեն: Հիշենք, որ այլ երկրներում ևս տարածված էին միստիկ և էպիկական անվանումներով ավանդություններ՝ Մահդիի անունով բազմաթիվ շարժումների ղեկավարներ, կեղծ Դ-միստրիներ, Ռ-յուրիկովիչներ և այլն: Չպետք է մոռանանք պատմական մի հանգամանք ևս. տարածաշրջանում իսլամը էական գործոն էր: Չնավորված ժողովուրդը երբեք չի ուժացվում, դիմագրկվում, պատմությունը այդպիսի փաստեր չունի: Իհարկե, էթնոխմբերի ինչ-ինչ հատվածներ, մասնակի տարրեր հնարավոր է, որ ձուլվեն, կորցնեն իրենց որոշ հատկանիշներ: Սակայն ձուլվում են հիմնականում ցեղախմբերը, ոչ կայուն էթնոմիավորները: Կրոնական հիմքի վրա օտարումը դեռևս չի նշանակում ազգության ամբողջական պատկերի կորուստ, պահպանվում են հոգևոր-մշակութային հարուստ հատվածը, բնական-մարդաբանական հատկանիշները, ապրելակերպի ձևը, ձեռք բերված արտաքին և ներքին փորձը, լեզվամտածողության նստվածքը և այլն: Ավելացնենք, որ հայությունը երբեք չի դարձել ամբողջովին քրիստոնյա: Դա են վկայում

առկա որոշ փաստեր, որոնք մենք օգտագործել ենք «Դրօշակ» ամսագրի 2008 թ. N 9-10-ի հոդվածում (էջ 37-41): Երկրի հեթանոսական հատվածի զգալի մասը հեռանում է Կովկաս, Խաղտիք, հյուսիս և այլն (Ազաթանգեղոս, «Հայոց պատմություն», 1983 թ., Եր., էջ 439), իսկ մնացածներն էլ օգտագործելով ամեն առիթ ձգտում էին ազատվել նոր դավանանքից: Այս իրողությունը նկատել է նաև Ֆ. Էնգելսը, ըստ որի Փոքր Ասիայի լեռնային գյուղացիությունը մերժեց կամ դժկամությամբ ընդունեց քրիստոնեությունը (Տես К. Маркс и Ф. Энгельс, Соч. т. 19, стр. 307-312): Իր հերթին, ինչպես գտնում են ժամանակաշրջանը ուսումնասիրած հետազոտողները, Բյուզանդիան իր էթնիկական-կրոնական անհանդուրժողականությամբ դեպի իսլամ հրեց Մերձավոր Արևելքի ոչ քաղկեդոնական դավանանքի բնակչությանը (Տես Լեո, հ. 2, 1967թ., Եր., էջ 280-281): Եվ այսպես, սոցիալ-տրնտեսական, հասարակական-քաղաքական զարգացումները հայության զգալի մասին կանգնեցրեց նոր կրոնի ընդունման խնդրի առջև: Ինչը չէր նշանակում ազգության ուրացում, ձուլում (այլպես իսլամը չէր դառնա համաշխարհային կրոն), այլ պարզապես զարգացման այլընտրանք էր: Այս կապակցությամբ, կարծում ենք, խիստ ուշագրավ է Մ. Աբեղյանի դիտարկումը հայ պատմիչներից մեկի կապակցությամբ. «կրոնի պատճառով հայ ազգը հալածվում էր և կարելի է ասել, որ Ա. Դավրիժեցու գրվածքը գրեթե մի համազգային և մասնավոր նահատակությունների վկայաբանություն է» (Մ. Աբեղյան, հ. 2, 1946 թ., Եր., էջ 449):

Այսպիսով, 7-րդ դարից սկսած ունենք երկու հայություն՝ քրիստոնեական և հեթանոս-մուսուլմանական: Պետականության պայմաններում ժողովրդի այս բաժանումները մեծ սրության չէին հասնում: Արժարժվում էին անգամ հաշտեցման և հանդուրժողականության գաղափարներ: Սակայն դրությունը փոխվեց անկախ պետականության կորստից հետո: Եկեղեցին գերհարստանալով ձեռք բերեց տնտեսական և քաղաքական մեծ կշիռ ու հեղինակություն. «Եվ չէր նուաստ աթոռ հայրապետութեանն քան չթագաւորութեանն Հայոց» (Մ. Ուռհայեցի, էջ 153-154): Ունենալով հրակայական հարստություն, իր ձեռքում պահելով հոգևոր-կրթական, վարչա-դատական ոլորտները, եկեղեցին հավակնում էր առաջնային դիրքի: Հոգևորականության միջավայրում առաջացավ



Սուրբ Կարապետ, մինչև 1950թ.

Սուրբ Կարապետ, Մուշ, 2000թ.

հայ թեոկրատական իշխանության ստեղծման գաղափարը, այլ կերպ՝ «հայ հոգևորականությունը քաղաքական իշխանության հասնելու նկրտումներ էր դրսևորում» (Տես Վ. Չալոյան, «Հայոց փիլիսոփայության պատմություն», 1975 թ., Եր., էջ 435): Այս երևույթը ուժեղացավ 15-րդ դարից հետո հատկապես: Ե՛վ պարսկական, և՛ թուրքական հատվածներում հայ եկեղեցին դառնում էր «հոգևոր սատրապություն» (Աշ. Հովհաննիսյան, «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», գիրք 2, 1959 թ., Եր., էջ 317): Իրավունքների վերահաստատումից գատ, պահպանվեց ապահարկությունը, եկեղեցին կարող էր դատել, պատժել և աքսորել հայ համայնքի աշխարհական և հոգևորական անդամներին, ուներ գույք ձեռք բերելու հնարավորություններ: Այսպես, Վարազա Ս. Նշանը, Մուշի Ս. Կարապետը, Աղթամարի և Սսի կաթողիկոսարանները և շատ այլ անվանի վանքեր (200-ից ավելի) ունեին 300 հա և ավելի հողեր և այլ հարստություններ (Հ. Ղազարյան, «Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ.», 1967 թ., Եր., էջ 84-85):

Այլ կերպ ասած՝ հայ եկեղեցին ուներ իր ձեռքում մեծ հնարավորություններ կիրառելու, տարածելու և պաշտպանելու նաև հայկականության իր ընթրումները: Այս պատկերացումները պահպան-

վեցին մինչև 19-րդ դարի կեսերը, երբ ձևավորված դեմոկրատական մտավորականությունը կարողացավ մշակել նոր գաղափարախոսություն, որի հիմնաքարը դարձավ «աստծուց հետո հայրենիք» գաղափարը (Ռ. Հովհաննիսյան, «Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը», 1965 թ., Եր., էջ 63):

Ցավոք, այն չամրացավ հայ իրականության մեջ, չդարձավ տիրապետող գաղափարախոսություն: Նորից ու նորից շարունակվում էր այլադավան հայության մերժման, օտարացման համընդհանուր եկեղեցական գործելակերպը: Այնինչ կյանքը և մասնավորապես հայ իրականությունը պահանջում էին նոր մոտեցումներ: Ավելացնենք, որ նման վիճակը լիովին ձեռնտու էր Հայաստանը նվաճած օտար պետություններին: Ինչպես նշում է Կ. Սասունին, «օսմանցին Հայաստանում հաստատեց անվանական իշխանություն, հայերին տալով եկեղեցական իշխանություն, քրդերին՝ կիսասանկախություն» (Կ. Սասունի, «Քուրդ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները», 1969 թ., Բեյրութ, էջ 40): Իհարկե, հայկական իշխանությունները, անկախ համայնքները, աշիրաթությունները պահպանեցին իրենց գոյությունը, սակայն հայտնվեցին անհավասար պայմաններում: Մուսուլման և այլադավան հայե-

րը (նաև հեթանոս) հայտնվեցին հայկականության «ոչ լեգիտիմ» կարգավիճակում: Իրենց հերթին այլադավան հայերը չկարողացան ստեղծել որոշակի հայկական իրենց ինքնուրույն կենտրոնները՝ լինի մուսուլմանական թե հեթանոսական: Այնուամենայնիվ, պահպանվել են նման գործընթացների, փորձերի մասին վկայություններ: Այսպես, Գ. Մազիստրոսը նշում է «խուժարուժ ազգ» թոնդրակյանների մասսայական կազմակերպությունների «հույլերի» մասին (Աշ. Հովհաննիսյան, նույն աշխ., գիրք 1, 1957 թ., Եր., էջ 377): Թոնդրակյանների այդ ինքնաբավ վիճակը հետագայում հասցրեց Դերսիմի մեկուսացմանը թե՛ քրիստոնյա հայերից և թե՛ «քրդերից»: Մի այլ հետաքրքիր փորձ էր Դանիշմանների դեկավարած «խլամական» բանակը, ընդդեմ սելջուկյան «թուրքական» կոչվող բանակի: Այս պայքարի արձագանքը թերևս այն եղավ, որ մինչև 20-րդ դարի սկիզբը օսմանյան հասարակությունը, խորշելով թուրքական բառից, իրենց կոչում էին իսլամական:

Որպեսզի այս եզրակացությունը չհնչի մերկապարանոց, անցնենք փաստերի շարադրմանը:

- Նիզամ ալ-Մուլքը սկիզբ դրեց մամլուկների և դուլամների սիստեմին, որոնցից էին 7000 հայկական հեծելազորը: Այդ հեծելազորի արձակումից հետո, որին դեմ էր ալ-Մուլքը, սկսվեցին կայսրությունը քայքայող գահակալական կռիվները (Տես Բ. Եղիայան, «Սելջուկ-թաթար-օսմանյան թուրքերու պատմություն», 1989 թ., Անթիլաս, էջ 97):

- Ռումի սուլթանի գվարդիան կազմված էր հիմնականում հայերից (Դ. Երեմեն, «Թուրքերի ծագումը», 1975 թ., Եր., էջ 144):

- Իբն Բիբին նշում է, որ Անատոլիայի նշանավոր էմիրների մեծ մասը իսլամացած նախկին ստրուկների զավակներն են (Տես Երեմեն, նույն աշխ., էջ 145):

- Դուկաս Ինճիճյանը իր «Աշխարհագրություն Նոր Հայաստանի» աշխատության մեջ նշել է մեկ տասնյակ միջնադարյան հայ քաղաքաշրջաններում տեղի ունեցած իսլամացման հետևանքները, այն է 792 հազար տուն, և արդյունքում 12 միլիոն հայությունը 15-րդ դարից իջնելով 19-րդ դարում կազմեց 3-4 միլիոն: Մեծ հայազեռը ևս գտնում էր, որ իսլամացումը թրքացում է:

- Թուրք հետազոտողների կարծիքի համաձայն այսօր Թուրքիայում անհետացած է անդրրկասպյան մարդաբանական տիպը և տիրապետող է արմենոիդ, առաջավորասիական տիպը և որ թուրքերի մոտ բարձր է արյան հայկական Բխումբը (Տես Երեմեն, նույն աշխ., էջ 294):

- Մեծանում է նաև ժամանակակից թուրքերենում հայկական ծագումով բառերի քանակը, որպես արդյունք 1930-ական թվականներից սկիզբ առած «հարազատ թուրքերեն» շարժման («Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 12, Թուրքիա, 1975 թ., Եր., էջ 148):

- «Հարազատ իսլամական» շարժումը (12-րդ դ.) ըստ էության շարունակել են Դանիշմաններից հետո 13-15-րդ դարերում Կարաման բեյերը (մուսուլմանացած հայ իշխան Նուրի բեյի ժառանգները), որոնք պայքարելով արաբական և պարսկական ազդեցությունների դեմ ինքնորոշվել են որպես մուսուլմաններ: Այլ կերպ ասած, դա յուրօրինակ «էթնիկական վերածնունդ» էր: Հետևաբար, այլադավան հայության զգալի մասը կոնսոլիդացվել է որպես մուսուլման և մինչև 20-րդ դարը այն չունեցավ թուրքական էթնոձևավորման գործընթացի տեսք: Դա ընդամենը կրոնափոխություն է եղել և ոչ թե էթնիկական, ազգային ամբողջական դիմազրկում: Եվ որ նման գործընթաց չի եղել իրականում, վկայում է նաև այն փաստը, որ Օսմանյան կայսրությունում թուրք բառը արտահայտել է միայն հասարակության ցածր խավին՝ գյուղացիության պատկանելը և ունեցել է սոցիալական իմաստ և ոչ թե ազգային կամ էթնիկական: Այս իմաստով, 20-րդ դարի Օսմանյան կայսրության թուրքացման գործընթացը ավելի շուտ սոցիալ-քաղաքական երևույթ էր: Այդ են վկայում անգամ քեմալականների ամենահայտնի ու մասսայական կարգախոսները՝ «արորը Թուրքիայի ապագան է» կամ թուրք լինելու հպարտության զգացողությունը:

Այսպիսով, այս փոքր անդրադարձը անգամ վկայում է, որ ազգի, ազգության և ժողովրդի միջնադարյան ընկալումները մեր ժողովրդի պատմության մեջ կատարել են պառակտող դեր և օտարել են իրարից մեր ժողովրդի երկու հատվածները:



ՎՏԱՆԳՎԱԾ Է ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՎԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՀԵՌԱՆԿԱՐԸ

Լիլիթ Գալստյան
Ազգային ժողովի պարզամասկոր

Լեզվի և հանրակրթության մասին ՀՀ օրենքներում փոխոխություններ կատարելու կառավարության նախագիծն իրադեպ լուրջ ընդվզում է առաջացրել, և դա շատ բացառելի է ու սրամաքանական: Տրամաբանական, որովհետև անդրադառնում է մեր հասարակության համար շատ զգայուն ու բացառիկ արժեք ունեցող երկու ոլորտի՝ լեզվին և հանրակրթությանը: Անառարկելի է, որ ԱԺ ներկայացվող օրենքների նախագծերը ֆաղափական, սոցիալական և բարոյական հիմնավորում չունենան: Ըստ նախագծի առաջին սարքերակի հիմնավորման՝ հիմնական շեշտը դրվում է կրթության ոլորտում միջազգային համագործակցության արդյունավետության բարձրացման և օտար լեզուների խորացված կամ օտար լեզվով կրթական ծրագրերի իրականացման վրա: Սա հայտարարված հիմնավորումն է:

Խորհրդարանական գործունեության այս երեք տարիների ընթացքում հասկացել եմ, որ որևէ օրենք կամ նախագիծ դասահարք չի հայտնվում խորհրդարանում: Բոլոր օրենքներն իրենց եսևում ֆաղափական դասվել ունեն՝ սղասարկում են այս կամ այն խմբի ֆաղափական կամ սնեստական շահերը: Սա է իրակա-

նությունը: Այն, որ նախագիծը ֆաղափական դասվել է՝ հստակ է, իսկ կառավարության հիմնավորումները՝ մտացածին, որովհետև կրթության ոլորտի գործող օրենքների ու միջազգային մի շարք դայմանագրերի քաղաքական հայտարարված հիմնավորումը լուծելի է, ու «Լեզվի մասին» և «Հանրակրթության մասին» օրենքները փոխելու կարիք ամենևին էլ չկա:

Բայց վարչապետն ավելի անկեղծ է գտնվել և հայտարարել, որ այս նախագիծով օրենսդրական հիմնավորում են սալիս գործարար Ռուբեն Վարդանյանի՝ Դիլիջանում արդեն իսկ կառուցվող միջազգային դպրոցի գոյությանը: Այսուհետև, դարձապես բացելով օտարալեզու դպրոցների առջև: Բայց խնդիրը օտարալեզու դպրոցին չի վերաբերում, այլ մեր ազգային դպրոցի հեղինակության, կրթության որակի բարձրացմանը և իրադեպ մրցունակ կրթական համակարգի ձևավորմանը:

Ո՞վ չգիտե, որ կրթական համակարգը թաղված է կաշառակերության մեջ, որ դպրոցում ստացած դասարժեքով բուռն չեն ընդունվում: Դպրոցին զուգահեռ կրկնուսույցի ինստիտուտն է բարգավաճում: Դպրոցն ու ուսուցիչը վերածվել են ընտանիքի սեխնուղղիաների

գործիքի: Մասն խնդիրներ են, որոնց սազնադով լի-
սի վերաբերվել ու փորձել լուծել: Հասարակությունը մե-
զանից այս խնդիրների լուծումն է զահանջում և ոչ թե
փախուս դեղի օտարալեզու դորոցը: Իսկ մեր կառա-
վարությունը, փոխանակ կրթական համակարգը մը-
ցունակ դարձնելու, լեզուն է մրցակցային գործիք
դարձրել՝ ազգային լեզուն, ինչն անսակարկելի արժեք
է և երբեք չի կարող մրցակցության գործիք դառնալ:

Անհերքելի է, որ օտար լեզուների իմացության մա-
կարդակը բարձրացնելու խնդիր իսկապես ունենք: Ու-
րեմն շատ ավելի արժեքավոր էլիսի լինել, եթե մեր կա-
ռավարությունը կրթության որակի բարձրացման, դրո-
րոցի նորացման, լեզուների դասավանդման որակի և
մեթոդների արդյունավետության մասին մտածել: Մեր
հասարակությունը միայն մի սոցիալական լուծում է
ունի՝ բարձրացնել ազգային կրթության որակը և կո-
ռուկցիայի ճանկերից փրկել կրթական համակարգը:

Իսկ «Հանրակրթության մասին» գործող օրենքի
6-րդ հոդվածի 5-րդ կետը ամբողջությամբ թույլ է տա-
լիս իրականացնել նախագծի հիմնավորումը: Հիմնա-
կան դորոցում հանրակրթական լուծումների չափորո-
շիչի 50% զահողանելու, իսկ ավագ դորոցում՝ 30%
զահողանելու դեղում կրթական հաստատություններն
ազատ են իրականացնելու այլ կրթական ծրագրեր: Ու-
րեմն ինչն է նախարարում «Լեզվի մասին» օրենքը,
որն ամրագրել է հայերենը որպես կրթության լեզու:

Ի դեղ՝ նախագիծը նախատեսում է կառավարու-
թյան որոշումով արտոնել միջազգային հաստատու-
թյուններին այլընտանային, հեղինակային և փորձա-
րարական ծրագրեր իրականացնող դորոցներ հիմնել և
օտար լեզվով ուսուցումը սկսել միջնակարգ կրթության
երկրորդ ասիճանից՝ այսինքն 5-րդ դասարանից:
Նախ, կրթության ոլորտի որևէ օրենքով սահմանված չէ,
թե որոնք են այլընտանային, հեղինակային և փոր-
ձարարական դորոցները և ինչ չափորոշիչների են են-
թակա: Մի՞թե կարելի է այսպես թեթև վերաբերվել մեր
հոգևոր անվտանգությանը: Ո՞ր մնացին մեր ազգային
անվտանգության ու լեզվաբանականության հայե-
ցակարգում ամրագրված ազգային դորոցին վերա-
դառնալից առաջնությունները: Հինգերորդ դասարանի
հայ երեխայի տեսակն ու աղազան են խեղում: Կր-
թական ֆաղափականության լուծումներն անկարող են
հասկանալ, որ լեզուն ոչ միայն կեցու-
թյունն է, այլև համակարգ ու մտածողություն: Մայրե-
նիով հանրակրթություն չստացած հայը այլ արժեհա-
մակարգ կրող է:

Գարձյալ առանց հիմնավորման, նախագիծն ար-
ձանագրում է 15 դորոցների հանգամանքը: Ո՞վ է այս

թվաբանության լուծումներն, ի՞նչ ազդակներից է
սովել այս լուծումը:

Ազգին ձուլելու ամենակարճ ճանադարը լեզ-
վամտածողությունը խաթարելն է, որովհետև լեզվա-
կան ընդհանրությունը նաև ազգային միասնականու-
թյան բաղադրիչ է:

Չեմ դադարում վերավորվել ու զարմանալ՝ Անկա-
խության 20-րդ տարում, Անկախության հռչակագրով
ու Սահմանադրությամբ լուծումներով մեր լեզուն,
ազգային արժանադասությունն ու լուծումներն ու
նստացնող այս ի՞նչ հանգրվանի հասանք: Մի՞թե
չի գիտակցվում այն լուծումները, որ լեզուն
մեր ազգի ինքնության գոյատևման կարևորագույն
երաշխիքն է, ինքնության ողնաշարն է. չկա լեզու, չկա
ազգ: Խաթարում ու վտանգում են ազգային միասնա-
կանությունը, Երրորդ հանրապետության հեռանկարը:
Այո՛, հանրապետության հեռանկարը՝ մանավանդ երբ
խնդիրն նայում ենք Հայաստանի դեմոկրաֆիական
լուծումների համատեղում:


Ի դեղ, միջազգային փորձը շարունակ վկայակո-
չող մեր կառավարությունը լուծում է որ իմանա, որ Հու-
նաստանում, Շվեդիայում կամ ասեմք Հոլանդիայում
օտարալեզու կամ միջազգային դորոցներում սվյալ
երկրի ֆաղափակները չեն սովորում: Բացատրությունը
մեկն է՝ ազգային դորոցի արժանադասությունն ու-
նեն ու սեփական ինքնությունը հարգելու ֆաղափա-
կություն:

Իսկ մենք մեր սեփական խնդիրներն ու թերացում-
ներն արձանագրելու և դրանք լուծելու փոխարեն ինչ-որ
երկրորդական, կեղծ ու մոլորեցնող լուծումներ ենք
փնտրում: Իսկ եթե ամեն գնով լուծումները իրականաց-
նելու մղում ունեն որոշ մարդիկ, աղա ուզեն թե չու-
զեն՝ հաշվի լուծումն ունեն նաև հասարակության ընդ-
վզումի հետ, որը «ոչ» է ասում օտարալեզու դորոցին:
Իսկ «ոչ»-ի բանակում են մտավորականությունը,
ստեղծագործական միությունները, օրինագծին դեմ է
Գիտությունների ազգային ակադեմիայի հումանիտար
բաժանմունքը՝ Արվեստի, Լեզվի, Պատմության և Գրա-
կանության ինստիտուտները, նաև Հանրային խորհուր-
դը, լուծումները ազգի հեռանկարով սազնադող յու-
րաբանչյուր հայ:

«Լեզվի մասին» և «Հանրակրթության մասին»
օրենքների նախագծերի շրջանառության մեջ հայտնու-
թյունը ֆաղափական, սոցիալական և բարոյական որևէ
հիմնավորում չունի, այն մարտահրավեր է մեր ազգա-
յին ինքնությանն ու նույնն է թե՛ ազգային անվտանգու-
թյանը:

Թուրք-ադրբեջանական հակահայ լոբբինգը Միացյալ Նահանգներում

Կարեն Վերանյան



Թուրքական լոբբիստական գործունեությունը

Ըստ ԱՄՆ-ի Արդարադատության նախարարության՝ լոբբիստական խմբերի վերաբերյալ 2008 թ. տարեկան հաշվետվության, 2008 թ. Թուրքիան դասվել է ԱՄՆ-ի Կոնգրեսում իրենց ցածր առավել հաճախակի լոբբինգած երկրների ցարժում (2268 անգամ): Չեկոյցի ջրվալներով, Թուրքիան այլ օտարերկրյա երկրների ցանկում զբաղեցրել է 4-րդ դիրքը՝ ըստ լոբբիստական գործունեությանը հասկացած ծախսերի հաշվարկի՝ \$4,2 մլն. և զիջել է միայն Միացյալ Արաբական Էմիրություններին (\$11 մլն.), Մեծ Բրիտանիային (\$6 մլն.) և Ճապոնիային (\$4,23 մլն.): Թուրքական

ցածրը դառնալով լոբբիստներ առավել ակտիվ գործունեություն են ծավալել 2007 թ. տարեվերջին, երբ Կոնգրեսում ֆինանսական եր դրվել Օսմանյան կայսրության կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության ճանաչման մասին օրինագիծը: Մեկ ամսվա ընթացքում թուրքադատ լոբբիստներն անցկացրեցին 673 հանդիպումներ կոնգրեսականների ու հրեական լոբբինգի ներկայացուցիչների հետ: ԱՄՆ-ի թուրքական լոբբիստական խմբերն իրենց գործունեությունը ծավալում են գլխավորապես երկու հիմնական ուղղություններով.

ա) հայ-թուրքական, հայ-ադրբեջանական հարաբերություններ, ինչը ենթադրում է հակազդել ԱՄՆ-ի Կոնգրեսում և գործադիր իշխանու-

թյունում հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման հարցի շուրջ ցանկացած ֆինանսական, բանաձևի կամ որոշման առաջնորդման գործընթացին, խոչընդոսել ԱՄՆ-ՀՀ, ԱՄՆ-ԼՂՀ համագործակցության խորացմանն ու ՀՀ-ին և ԼՂՀ-ին ցուցաբերվող ԱՄՆ-ի ֆինանսական աջակցման հարցերին, հակազդել ու սահմանափակել ԱՄՆ-ի հայկական լոբբինգն ու նրա ազդեցությունը ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների ուղղությամբ,

բ) ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններ, ինչը ենթադրում է ամրադնդել ԱՄՆ-Թուրքիա ռազմաֆաղափական, ռազմավարական համագործակցու-

թյունը, ադահովել Միացյալ Նահանգներից Թուրքիային սրամադրվող ռազմասեխնիկական, սնեստական և այլ սեսակի աջակցությունը:

Միացյալ Նահանգներում թուրքական Եստերի առաջնրդման հարցում զգալի է նախ և առաջ Թուրքիայի և ԱՄՆ-ի թուրքերի հարցերով կոնգրեսական հանձնախմբի դերակասարությունը («Congressional Caucus on Turkey and Turkish Americans»): Կոնգրեսական հանձնախումբը սեսեղծվել է կոնգրեսականներ Ռոբերտ Վեֆլերի (դեսնկրաս, Ֆլորիդա), Էդ. Ուայթֆիլդի (հանր., Քենթոնի) և Քեյ Գրենգերի (հանր., Տեխաս) կողմից 2001 թ. մարտին: Հանձնախումբը երկկուսակցական համակարգով գործող օրենսդրական կառույց է, որը ներգրավված է ԱՄՆ- Թուրքիա հարաբերությունների և Միացյալ Նահանգներում բնակվող թուրք համայնքի ու Թուրքիայի Եստերի դաԵժոյանության խնդիրներում: 2010 թ. մարտի 2-ի դրությամբ Թուրքիայի հանձնախմբի անդամների ֆանակը 104-ն էր. ըստ նրանց նահանգային դասկանելության՝ թվաֆանակով առաջին հերթին առանձնանում են Տեխասի կոնգրեսականները՝ թվով 13 անդամ, որոնց հաջորդում են Հյուսիսային Կարոլինայի ու Փենսիլվանիայի կոնգրեսականները, համադասասխանաբար 9 և 6 անդամ:

Ի դեղ, Թուրքիայի հարցերով հանձնախմբում կան անդամներ, որոնք հանդիսանում են նաև հայկական կոնգրեսական հանձնախմբի անդամներ: Կոնգրեսականների ներկայաց



վածությունը միաժամանակ երկու և ավելի լոբբիսական խմբերում դայմանավորված է երկու գլխավոր հանգամանքով. նախ՝ ԱՄՆ-ի Ներկայացուցիչների դալասի անդամները, որոնց ընդհանուր թվաֆանակը կազմում է 435, եթե ներառված լինեին ընդամենը մի ֆանի կոնգրեսական հանձնախմբերում, ադա դալասի որոԵումները կլինեին այդ խմբերի խիստ վերահսկողության ներքո: Եվ երկրորդ՝ կոնգրեսականները, ներկայացված լինելով սարբեր կոնգրեսական հանձնախմբերում, իսկ ավելի հաճախ այն խմբերում, որոնք միմյանց հես կադված են լոբբիսական գործունեության նդասակներով (հայկական և թուրքական, հունական և թուրքական հանձնախմբեր), կարողանում են ԱՄՆ-ի արսաֆին կամ ներքին ֆա


դաֆականության խնդիրներում լինել առավել սեղեկացված այս կամ այն հարցի Եուրջ և ճկուն՝ կոնգրեսական հանձնախմբերի հես փոխհարաբերություններում:

Բացի թուրքական կոնգրեսական հանձնախմբից, ԱՄՆ-ի գործադիր ու օրենսդիր իԵխանությունում թուրքական լոբբիցը, դաԵժոնական Անկարայի և սեղի թուրքական համայնքի հովանու ներքո, էական աջակցություն է սսանում ամերիկյան այնդիսի հեղինակավոր լոբբիսական կազմակերդությունների կողմից, ինչդիսիք են Neusner Communications, Fleishman-Hillard, Livingston Group, Jones Walker-ը: Այդ ընկերությունների աԵխասանքները

կորորինացնում է ԱՄՆ-Թուրքիա բարեկամության միջխորհրդարանական խմբի համանախագահ, նախկին դեմոկրատ կոնգրեսական, «Խաղաղություն Մերձավոր Արևելքում» վերլուծական կենտրոնի ղեկավար Ռոբերտ Վեֆլերը:

Կոնգրեսում թուրքական Երևելքի առաջնորդական հարցում իր հակահայ լոբբիստական գործունեությամբ աչքի է ընկնում նախ և առաջ Livingston Group ընկերությունը՝ սերտորեն համագործակցելով Թուրքիայի կառավարության ու թուրքական լոբբիստական կազմակերպությունների ու անհատների հետ: Ընկերությունը, որը հիմնադրվել է 1999 թ. նախկին կոնգրեսական Ռոբերտ Լիվինգստոնի կողմից, համագործակցում է այնպիսի կազմակերպությունների, կառավարությունների և ֆառական գործիչների հետ, ինչպիսիք են Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանը, Ռոյալ Ռոյսը, Թուրքիայի կառավարությունը, Լոֆիդ Մարսինը, Լիբիայի նախագահ Մուամմար Քադաֆին:

Livingston Group-ը առանձնահատուկ կադրեր է հաստատել Անկարայի հետ՝ վերջինիս Երևելքը լոբբինգելու ԱՄՆ-ի գործադիր ու օրենսդիր իշխանությունում: 2000 թ. ի վեր ընկերությունը Թուրքիայի կառավարությունից ստացել է ավելի քան \$13 մլն.՝ ԱՄՆ-ի կառավարությունում հակահայ լոբբիստական գործունեություն ծավալելու նպատակներով (հիմնականում հայերի դեմ իրականացված ցեղասպանության հարցում): Միայն 2006 թ. Livingston Group-ը Թուրքիայի հետ ստորագրեց \$1,8



մլն. արժողությամբ մեկ տարվա դաշնամագիր: Ներկայում ընկերությունը ակտիվորեն ներգրավված է Օբամայի վարչակազմում, կադրեր ունի ԱՄՆ-ի Կոնգրեսի երկու դաշնամագիր էլ: Livingston Group-ն ակտիվ համագործակցում է Jones Walker ընկերության հետ՝ համաձայն 1999 թ. նրանց միջև ձևավորված «ռազմավարական դաշնակցային հարաբերությունների»: Ընկերությունները համատեղ ջանքերով լոբբիստական աշխատանքներ են իրականացնում սարքեր կառավարություններին, այդ թվում և Թուրքիային իրենց ծառայությունները առաջարկելու ուղղությամբ:

Gephardt Group-ը Թուրքիայի հետ համագործակցում է գլխավորապես ԱՄՆ-ի օրենսդիր ու գործադիր իշխանությունում հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի խափանման և այդ փաստի մերժման ուղղությամբ: Ընկերությունը հիմնադրել է ԱՄՆ-ի Ներկայացուցիչների դաշնամագիր նախկին կոնգրեսական Ռիչարդ Գեֆարդը՝

2007 թ.: Լոբբիստական այս հեղինակավոր ընկերության հետ համագործակցել են այնպիսի խոշորագույն կազմակերպություններ, ինչպիսիք են «Բոինգ»-ը, «Վիզա»-ն: Վերջերս ընկերության լոբբիստական ծառայություններից սկսել է օգտվել նաև Վրաստանի կառավարությունը, որը 2010 թ. հունվարին տարեկան \$440.000 արժողությամբ դաշնամագիր ստորագրեց Ռիչարդ Գեֆարդի հետ՝ Gephardt Group-ի ԱՄՆ-ի Կոնգրեսում ու գործադիր իշխանությունում Վրաստանի Երևելքի դաշնամագիր նպատակներով: Մեկ այլ լոբբիստական կազմակերպություն՝ DLA Piper ընկերությունը 2007 թ. Անկարայից ստացել է շուրջ \$1,2 մլն.՝ Կոնգրեսում հայերի դեմ իրագործված ցեղասպանության ճանաչման հարցի շուրջ ֆինանսավորման կանխման նպատակներով: Ընկերության՝ Թուրքիայի կառավարության հետ համագործակցության զարգացման գործում (2008 թ.) զգալի է եղել ընկերության ֆառական հարցերով ավագ խորհրդական Ռիչարդ Արմեյի դերը (Richard Arme): Նշենք, որ այս առաջատար լոբբիստական կազմակերպությունը 2009 թ. իր լոբբիստական գործունեությունից ստացել է \$10.560.000 մլն. եկամուտ:

ԱՄՆ-ի թուրքական լոբբինգը ավանդաբար ակտիվացավ նաև ս. թ. մարտի սկզբներին՝ կադրաված Ներկայացուցիչների դաշնամագիր Արսաֆին հարաբերությունների հանձնաժողովում մարտի 4-ին փլեարկության դրված 252-րդ բանաձևի հետ, ինչի արդյունքում մոբիլիզացվեցին թուրքա-

Leonard Schechter Associates ընկերությունը Ադրբեջանի ԱԳՆ-ից ձեռք է բերել \$41,6 հազար՝ ԱՄՆ-ի հասարակայնության հետ կապերի ամրապնդման նպատակներով, իսկ JWI ընկերությունը Ադրբեջանի Միջազգային բանկից ստացել է \$167,8 հազար՝ ՉԼՄ-ների հետ կապերի զարգացման համար: Livingstone Group ընկերությունը երկրի ԱԳՆ-ից ստացել է \$325 հազար՝ Կոնգրեսի անդամների հետ ֆադաֆական խորհրդակցությունների, ԱՄՆ-Ադրբեջան երկկողմ հարաբերությունների զարգացման և այլ միջոցառումների կազմակերպման նպատակներով: ԱՄՆ-ի Արդարադատության նախարարության հաշվետվությունում նշվում է, որ 2008 թ. ԱՄՆ-ում Ադրբեջանի դեսպանատունը Melwood Communications ընկերությանը փոխանցել է որոշակի գումար (գումարի չափը չի նշվում) Ադրբեջանի Եսենթին համադասասիսան մեդիա-նազմավարություն մշակելու նպատակով: Իսկ Ադրբեջանի գլխավոր հյուպատոսությունը Sitrick and Company ընկերությանը սրամադրել է \$8,9 հազար՝ Լոս Անջելեսի ՉԼՄ-ների հետ կապերի կազմակերպման համար:

ԱՄՆ-ի գործադիր ու օրենսդիր իշխանությունում ադրբեջանական լոբբիստական աշխատանքների կազմակերպման ու ուղղորդման գործում զգալի է նաև դաշնային Անկարայի ու ԱՄՆ-ի թուրքական լոբբիստական խմբերի աջակցությունը: Թուրք և ադրբեջանական լոբբիստական խմբերը, սերտ հարաբերություններ հաստատելով

միմյանց և ԱՄՆ-ի գործադիր ու օրենսդիր իշխանության այլ դաշնայաների ու օրենսդիրների հետ, ակտիվ ու հետևողական լոբբիստական ֆադաֆականություն են իրականացնում հայության, ՀՀ ու Արցախի դեմ:

Ադրբեջանական կոնգրեսական հանձնախումբ

ԱՄՆ-ի «Ադրբեջանի կոնգրեսական հանձնախումբը» (Congressional Azerbaijan Caucus) հիմնադրվել է 2004թ. սկզբներին կոնգրեսականներ Կուրս Ուելդոնի (հանր., Փենսիլվանիա) և Սոլոմոն Օրսիսի (դեմոկրատ, Տեխաս) կողմից: Ուելդոնը գլխավորել է մի քանի դաշնակցությունների այցը Ադրբեջան և ակտիվորեն ներգրավվել ԱՄՆ-Ադրբեջան երկկողմ հարաբերությունների զարգացման գործընթացում: 2008թ. հուլիսի դրությամբ հանձնախմբի անդամների քանակը, ըստ «ԱՄՆ-ի ադրբեջանցիների համացանց» լոբբիստական կազմակերպության սվյալների, հասել է 42 կոնգրեսական: Հանձնախումբը ներկայում համանախագահում են Սոլոմոն Օրսիսն ու Բիլլ Շուսթերը (Փենսիլվանիա): Ադրբեջանական հանձնախումբը կարևոր դերակատարություն է ունեցել Կոնգրեսում Կասպյան ավազանի էներգետիկայի և ԱՄՆ-Ադրբեջան երկկողմ սննդային, անվտանգության և նազմական ոլորտներում համագործակցության զարգացման, ինչպես նաև ՀՀ-ին, ԼՂՀ-ին ու հայության Եսենթին վերաբերող հարցերին հակազդման ուղղությամբ:

Հանձնախումբը վերջին մի քանի տարիների կրկնվածով սկսել է ակտիվ լոբբիստական աշխատանքներ ծավալել այսպես կոչված «Խոջալուի դեմքերի» իրավաֆա-

դաֆական Եսենթինյան ուղղությամբ, որն ադրբեջանցիների կողմից ակտիվացնում է հասկառու յուրաֆանջուր սարվաֆետրվարի 25-26-ին: Այսպես, 2008 թ. ֆետրվարի 25-ին Ներկայացուցիչների դալաֆի հերթական նիստի լուումներում ադրբեջանական հանձնախմբի անդամ, հանրադեսական Վերջինիա Ֆոֆաը (Հյուսիսային Կարոլինա), որը հանդիսանում է միաժամանակ թուրքական կոնգրեսական հանձնախմբի անդամ, իր ելույթում կոչ արեց կոնգրեսականներին «Սոմալիի, Ռուանդայի, Բոսնիայի, Դարֆուրի իրադարձությունների կողմին լուսաբանել 1992 թ. ֆետրվարի 25-26-ին տեղի ունեցած այսպես կոչված «Խոջալուի դեմքերը»: Ֆոֆաի իրականությանը չհամադասասիսանող բնորոշմամբ, «հայկական գորբերը ռուսական գորբերի աջակցությամբ ֆանդեցին Խոջալուն՝ դաժանաբար սղանելով 613 բնակչի...»: Հաջորդ՝ 2009թ. ֆետրվարի 26-ին նույն «հարցը» Ներկայացուցիչների դալասում բարձրացրեց թուրքական կոնգրեսական հանձնախմբի համանախագահ և ադրբեջանական կոնգրեսական հանձնախմբի անդամ Էդ Ուայթֆիլդը, որն «այդ դեմքերը» որակեց որդես «մեծ ողբերգություն»:

